

# Ս Ի Ո Ւ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԻԵՏՈՎԱԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԿԱՐՔ ԵՎ ԱՌԱՋՎԱՎԱՐ ՀԱՅ ՊՈՎԵՐԱՐՄԱՆ ԹԵՂԵԿ

Ն Ո Ր Շ Ր Ձ Ա Ն

ԺԴ. ՏԱՐԻ 1940



ՏՊԱՐԱՆ ՄՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱԼԵՄ

# ՍԻՐՆ

ԺԴ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1940

« ԴԵԿԱՏԵՄԲԵՐ »

ԹԻՒ 12

## ԽՄԲԱԴՐԱԿԱՆ

### ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Բ.

Նախորդ Խմբագրականով իր զիսաւոր զիծերուն մէջ մատնանշեցինք այն կարեոր թերիները, որոնք Սփիւռքի հայ կրթական գործը կը մատնեն լուրջ վտանգներու։ Այդ վտանգները դիմաւորող դարմաններ չբերինք. հոս կ'ուզենք ամփոփ զիծերով մօտենալ անոնցմէ կարեորներուն։ Հասկնալի է որ մեր նկատողութիւնները մնան հարկադրաբար ծրագրային։ Մեր կրթական վերանորոգումը որ պէտք է առարկայ ըլլայ մեր օրերու ամենէն տիրական ճիզին, կը պահանջէ ինամք և լուրջ շահազրպութիւն։

Կրթական հարցին շուրջ, նախորդ Խմբագրականին մէջ, մեր նկատողութիւններու առաջինը կը շօշափէր անոր անտեսական կողմը։ Մեզի կը պակսին այսօր նիւթական միջոցներ մեր կրթարանները բաղձալի վիճակի մը մէջ դընելու համար. ի մտի չունինք այս նպատակով գոյութիւն ունեցող և կիրարկուող կտակները, և Բարեգործականի կողմէն եղած յատկացումները. անշուշտ արհամարհելի չէ հայ կրթական գործին անոնց բերած սատարը, սակայն անոնք կը մնան մասնակի, և անբաւական։

Ժամանակին կը մտածուէր կտակներով և հարուստներէ մեկենասուած գումարներով վարել հայ կրթական գործը։ Ռուսահայոց մէջ կէս դար առաջ այս կերպ խորհողներու թիւը քիչ չէր։ Թրքահայաստանում տարբեր չեղաւ պարագան. հանգանակութիւններով ձեռք բերուած գումարներ՝ միակ տրամադրելի աղբիւրները կազմեցին մեր կրթութեան, եկեղեցիին զանձանակէն ստացուած լումաներուն հետ միասին։ Այսօր հանգամանքները փոխուած են, և անբաւական ու անկարելի կը մնան այդ կերպերը. անհրաժեշտ է խորհիլ ուրիշ միջոցներու։

Միակ կարելի և գործնական միջոցը հայ կրթական գործի վերակենդանացման և տեականացման, կրթական տուրք մը սահմանելն է Սփիւռքի իւրաքանչիւր զիսաւոր շըջանին համար, բան մը՝ զոր արդէն իրազործած են կարգ մը գալութներ, ինչպէս Եղիպտոս՝ աղդային տուրքին իրեւ մաս։ — Առաջարկուածը հակառակ իր նորութեան՝ բացարութեան չի կարօտիր. կը մնայ մտածել անոր իրացման կերպերու մասին։ Այս կերպով սահմանուած տուրք մը՝ կլնայ հայթայթել իւրաքանչիւր զաղութին համար կարեոր գումարներ, և մըշատու կերպով մնուցանել հիմնադրամ մը, գործածելի համապատասխան շըրջաններու կրթական գործին հաստատուն բարգաւաճման։ Երկրորդ՝ ի նպաստ այդ հիմնադրամին անշուշտ կարելի է ապահովել կրթական նպատակներով եղած

բոլոր կտակներն ու մամնաւոր նույիրատուութիւնները : Եթէ զիմաւորուի այս առաջարկը ընդհանուրէն , կը կարծենք թէ ապահով հիմերու վրայ դրուած կ'ըլլայ արտասահմանի հայ կրթական գործը՝ մեր հազեղէն և խմացական զոյութեան կենսական ազդակներէն մինչ հայ դպրոցը :

Կրթական գործի տնտեսական հիմերու այս հաստատ խարսխումը , խոշոր չափերով պիտի դարձանէ մեր մէջ ուսուցչական ասպարէզին կապուած ծանր տաղնապը : Այս կերպով միայն կը ուսուալ որ մեր մէջ իրապէս ասպարէզ մը կարենայ դառնալ ուսուցչութիւնը , որմէ կարելի ըլլայ ակնկալել լաւազոյն ուժերու որակ մը : Անշուշտ նիւթականով միայն լուծուելիք ինսդիր մը չէ այս , սակայն լաւազոյն ուսուցիչներ ունենալու առաջին պայմանն է ան , որմէ յաճախ զրկուած կը մնայ դժբախտաբար հայ դպրոցը , իր նիհար միջոցներուն պատճառաւ :

Հոս չի վերջանար հարցը . կայ տակաւին դպրոցներու և վարչական կազմակերպութեան պարագան : Այս ինսդիրը բարեբախտաբար անլուծելի չէ . Հայ դպրոցը սկիզբէն ի վեր կապուած է եկեղեցին . այսօր ևս անհրաժեշտ է որ ան անմիջական հովանիին ներքեւ ըլլայ զանազան շրջաններու առաջնորդաբանին և ազգային մարմիններու : Այս կերպով վերջ կը դրուի անհատական , հայրենական և բարեգործական ուսումնարաններու խայտաբղէտ գոյութեան , և բոլորը մէկ անմիջական հովանիին ներքեւ կ'ըլլան Եկեղեցին՝ համազային այն միակ հաստատութեանը , որուն մէջ պէտք է հաշտուին բոլոր այս մասնաւորութիւնները , կարենալ սեեղծելու համար այն նմանութիւնը ողիի և ձգտումներու , որ հայունն է , և որմէ մենք կը հեռանանք տակաւ :

Պէտք է շեշտել թէ այս պարագային ալ Եկեղեցին ու վարժարանը՝ հոգեղէն և նույիրական այս զոյզ հաստատութիւնները , համայնական յարգանքի առարկայ պէտք է մնան միշտ , ինչպէս էին երրեմն , գերծ կուսակցական և հատուածական միջամտումներէ , և առարկայ ամենուն բոլորանուէր գուրգուրանքին : Դժբախտաբար սակայն , եթէ ոչ միշտ Եկեղեցին՝ գէթ դպրոցները յաճախ ենթակայ են կուսակցական այս ազգեցութիւններուն . անոնցմէ իւրաքանչիւրը իր տիրապետութեան շրջանին՝ տարանջատ ողի և վարչութիւն կ'ստեղծէ , տիսեղծ շունչ մը սփռելով դպրոցներէն ներս , ուր կուգան մատաղ հողիները հայութեան աւազանին մէջ մկրտուելու , սկզբնական մէկ և նոյն նկարազրով դրոշմուելու :

Դալով կրթական ծրագիրներու հարցին , բացառիկ ուշադրութեան կը կարօտի ան : Անշուշտ իւրաքանչիւր զաղութը Սփիւռքի , պարտաւոր է պատշաճի տիրող երկիր պահանջներուն , լեզուին և կրթական դրութիւններուն . այդ տուրքը հարկադրուած ենք վճարել մեզ հիւրընկալու երկիրներու պայմաններուն . որպէսզի սակայն անվթար կարենայ պահուիլ ազգային ողին մեզ շրջապատող օտար ազգեցութիւններու ներքեւ , կրթական ծրագիրներուն մէջ , տեղական պայմաններու յարմարող անոնց բաժինին քով անհրաժեշտ են ազգային և կրօնական բաժինները նախակրթաբանային ուսուցման : Հայ լեզուն ու զրականութիւնը , հայ կրօնը , հայ պատմութիւնն ու աշխարհազրութիւնը անզանցառելիօրէն մաս պէտք է կազմեն Սփիւռքի բոլոր դպրոցական ծրագիրներուն : Աւելին , զանազան գաղութներու մէջ կիրարկուած այլազան հայ կրթական ծրագիրներու փոխան , փափաքելի էր որ յարմար կեդրոնի մը մէջ պատրաստուէին համահայկական նկարազիր ունեցող տիպար ծրագիրներ , ընդզրկելի բոլոր զաղութներէն : Պատ-

բաստել նոյնպէս հայ ուսմանց դասազիրքերու ամբողջ գրութիւն մը՝ նոյն և միակ նկարազրով, պատշաճ ժամանակին և հաղորդ մեր ազգային ուրոյն ողիին:

Հոս անհրաժեշտ կը նկատենք յաւելու թէ Սփիւռքի մէջ հայ ողիին պահպանմանը համար բաւական չեն հայ նախակրթարանները: Երկրորդական վարժարաններու պէտքը անհրաժեշտ է. անիկա պերճանք մը չէ, ինչպէս կը մտածեն շատեր, այլ պահանջ մը, և անմիջական լրացուցիչ մը նախակրթարանային ուսմանց, ուր աշակերտները իրենց տարիքի և կրթութեան պատճառաւ չեն կրնար բացուիլ մեր արժէքներուն, և մնացեալ իրենց բախտաւոր տարիները կ'անցնեն օտար կրթութեան և ազգեցութիւններու ներքե, ուր հետզետէ օտար և ուժեղ մշակոյթներու ազգեցութեանը տակ, կը չքանան նախակրթարանային տարիներու մէջ ստացուած հայ արժէքներու տարերքը: Այս պատճառաւ փափելի է որ մեր Սփիւռքի իւրաքանչիւր զիսաւոր շրջանին մէջ դոյութիւն ունենայ գէթ մէկ երկրորդական հայ վարժարան, որ ապահովէ այդ շրջանի հայ մշակոյթի արժէքներուն մէջ կրթուած ընտրանիի մը գոյութիւնը:

Վերոյիշեալ իրազործումներով միայն կարելի պիտի ըլլայ ստեղծել ու մշանչենաւորել ազգային ողի և նկարազիր մեր ապագայ սերունդներուն մէջ: Մեզի պարտադրուած այս պանդխոտութիւնը կը զրկէ զմեզ մեր ազգային ինքնութիւնը պաշտպանող բոլոր տարբերէն: Մեր երբեմնի պաշտպան սրբութիւնները (հող, տւանդութիւն, և բարքեր) մեզի չեն օգներ. շրջապատող վտանգները աւելի են, քան ինչ որ կ'երեակայենք: Ազգային յլացք մը, և մեր հոգեկան և իմացական արժէքներու գուրզուրանքը աւելի քան երբեք պէտք է տեսական մտասեեռումը ըլլան մեզի համար զաղթաշխարհի մէջ, ատով արծարծելու մեր ներսը ցեղային այն ողին, որ այսօրուան բոլոր մեծ ու փոքր ժողովուրդները այրող տեսնդն է: Այդ յլացքը որ գժբախտաբար սկսած է աղօտիլ, կ'ամբողջանայ և կը լուսաւորուի Հայ Եկեղեցիով: Այս վերջի պարագան թող հաւանական սկեպորիկ մտածումով չառզորէ միտքերը. Հայ Եկեղեցին մեր ազգային գեղեցկագոյն արժէքներու բիւրեղացումն է, զանոնք հողիացնող ու լուսուրող անհիւթական և Աստուածային կրակը:

Զափազանցած չենք ըլլար երբ ըսենք թէ հայ ժողովուրդին արժէքը իր Եկեղեցին մէջն է և Եկեղեցիով: Չընդունելով այս իրողութիւնը այնպէս ինչպէս որ ան կայ մեր ժողովուրդի գոյութեանը մէջ, քանդել է մեր հոգեկան միութիւնը: Հայ Եկեղեցին միայն կրնայ ստեղծել այդ ողին, այսինքն վերահաստատել ինքզինքը:

Կը բաւէ որքան օրօրուեցանք ժամանակաւոր պատրանքներէն, մեզմէ դուրս որոնելով մեր ինքնութեան մաքուր ոսկին, արտաքին պարագաներու և ազգեցութիւններու կասկելով զմեզ: Ինքզինքնուս հետ օտար ապրելու այս վիճակը աւելի շեշտուեցաւ այս վերջի կէս դարու շրջանին մանաւանդ, երբ մենք տակաւ հեռացանք մեր ինքնութիւնը տաղաւարող հոգետաճարէն՝ Եկեղեցիէն: Դարձ մը գէպի Եկեղեցին, շատ բան պիտի վերագարձնէ մեզմէ մեզի: Եւ այդ դարձը շուտով եկող ժամանակներուն համար պիտի կրնայ ըլլալ միայն հայ դպրոցին մէջ իրական իր ողիին վերամուտովը Հայ Եկեղեցիին:

Հայ Եկեղեցին ստեղծեց Հայ Պարոցը, եւ ինքն է որ միայն իրապէս պիտի կրնայ զայն պահել:

ԽՄԲ:

## ԿՐՈՆԱԿԱՆ

### ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ

Ինչ որ իրապես կը պակսի մեզի . — Ինչո՞ւ այսօրուան մարդոց կեանքի ներքին կշռոյթը վրդովուած է այնքան : Ի՞նչ կայ հոն չափազանց, կամ ինչ է որ կը պակսի իրեն : Անքնականոնը՝ կարգի մը տագնապն է միշտ : Հոգիները անկարգութեան մատնուած են : Բնակարանը շրջուած է : Նիւթը հոգին առաջ կ'անցնի, միտքը խղճէն առաջ, և խիզճը, հոն ուր մարդը կ'ուզէ լսել անոր ձայնը տակալին, կը յաւակնի անզիւտանալ զԱստուած : Այսպէսով է որ կատարեալ է չարիքը : Յառաջադրուած վերջին այս եզրն է որ կը շահազրդուէ մեր մտածումը :

«Քաղաքակրթութիւնները կ'ելլեն Աստուածոյ գաղափարէն, ինչպէս գետ մը իր ակէն», կը զբէր կտկար Քինէ : Կէօթէ կ'արտայայտէր միւնոյն մտածումը ըսելով թէ «Աստուած կը բռնէ աշխարհը իր ձեռքերուն խաղաղութեան մէջ»։ տեսանողի խօսք, բանաստեղծի խօսք :

Եւ այս երկուքին մտածումը այն էր թէ մարդկութեան ստացումները կախում ունին անոր ինքն իր մէջ աճումէն, թէ այդ աճումը կախում ունի իւրաքանչիւր հոգիի մէջ կարողութիւններու ներգաշնակութենէն, և առարկաներու նուիրակարգութենէն, և թէ Աստուածոյ տեղը բարձրագոյնն է, յայտնուելով այդպէս իրրեւ պայմանը այդ ամենուն :

Գիտենք արդարե թէ Աստուած հիմն է բարոյական կարգին : Նկատենք միայն թէ հոս պահանջուած սրտերու ներգաշնակութիւնը, կ'ենթագրէ գերազոյն կանոնի մը ընդունելութիւնը, անվիճելի և առաջին արժեքի մը գնահատանքը, որ կուտայ միւս արժեքներուն և կանոններուն, և անոնց հիմունքին հետ անոնց սահմանները :

Ներքին Աստուածոյն բացակայութիւնը, մարդը կը մատնէ հոգեկան այն տարրաւուման, որուն ահաւոր ձգտումը կայ արդէն իր մէջ : Բարոյական անձնաւորութեան շիճում, կրայոյդ վիճակ, մեղաւոր տիլեդդանթիզմ, գործնական ֆրոյտականութիւն, փրուստականութիւն, ժիտականութիւն, բիւ-

րանտելլականութիւն, այն ատենն պիտի դառնան ըլլան ճշմարտութիւնը : Ահաւոր ճըշմարտութիւն, որուն զիտութիւնն ու ճարտարմարտութիւնը կը հայթայթեն զուգազիր մը որ կը բազմապատկէ վտանգը, կարծելով ամէն ինչ երաշխաւորել : Ասոր համար չէ՞ որ ըսուած է «խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուածոյ եւ զճշմարտութիւն նորա, և այն ամենայն յաւելցի ձեզ» (Ղկո. ԺԲ. 31)։ Աստուածոյ արքայութիւնն, այսինքն, բարիին թագաւորութիւնը՝ երկնաւոր Հօր հսկանիլն ներքեւ, եւ իրրեւ յաւելեալ բարիք անկէ մեզի հոսող, այս կեանքին մէջ իւրաքանչիւրին եւ ամենուն համար մատչելի բոլոր երջանկութիւններ, գեղեցիկ ծրագիր մը չէ՞ ասիկա:

Աստուած քենամի՞ է կեանքին . — Եւ սակայն հաւատացուցած են մարդոց թէ Աստուած թշնամի մըն է կեանքին . և իրաւ ալ այդպէս կը թուի, երբ նկատի ունենանք թէ Աստուածոյ պաշտօնական բարեկամները, եթէ կարելի է այդպէս ըսել, իրենք ինքնին բուն իսկ ապրողներ չեն . չեն բացուիր այն բոլոր բաներուն որոնք կարենութիւն ունին մեր գոյութեան մէջ, և պիտի կրնային ծառայել զայն զարգացընելու կամ պճնելու :

Մարդկութիւնը կ'ուզէ ապրիլ, և ահա որ կարգ մը կրօնական մարգիկ, կարգ մը խումբեր, կարգ մը տարիքներ կը թուին բոնուած ըլլալ անշարժացնող անցելապաշտութենէ մը, չոր աւանդապաշտութենէ մը, անխիւս և անզօր ձեւապաշտութենէ մը, խրած ստացուած դիրքերու վրայ կամ մը տայնութիւններու որոնք թշնամի են ամենահրաժեշտ եղաշրջումներու և պատշաճեցումներուն անգամ :

Բայց ճի՞շդ է զնահատել կրօնքին ծառայութիւնները ըստ անոնց, որոնք զայն անհոգի մարմի մը կը վերածեն, կամ առնուազն նիրող հոգիի մը : Պէտք է զայն զատել ըստ ինքեան և ի հարկին անոր սկզբունքները վերյիշեցնելով իր պաշտպաններուն . անոնք անհետեական մարգեր են յաճախ, մեղաւոր միշտ . բայց ճշմարտութիւնը կախում չունի իրենց տկարութիւններէն :

Ընդունինք թէ իրենց պատճառաւ, և կամ ցաւալի թիւր ըմբռնումներու հետեանքով, ոմանք կրցած են Աստուածոյ գաղափարին մէջ տեսնել, զործունէութեան հա-

մար քիչ օգտակար, և նոյնիսկ անդամաւութիւն մտագրաւում մը. ասիկա սակայն նախապաշտում մըն է, որմէ հարկ է ետ գալ այն պահուն մանաւանդ, ուր անձկութեամբ կշռելու վրայ ենք մեր բոլոր ոյժի աղբիւրները:

Գէշ ըմբռնուած Աստուծոյ հաւատքը, շատ չարիք է ըրած. բայց լուսաւոր և ուղիղ հոգիներէ գաւանուած այդ հաւատքը հրաշալիքներ կը գործէ: Մեզմէ միայն կախում ունի, չփակուիլ սա անհեթեթ երկսայրաբանութեան մէջ; թէ՝ անոնք պոնք ունին լաւ սկզբունքներ չեն յառաջանար այլս. իսկ անոնք որոնք կը յաւակնին յառաջանալ, կը մերժեն լաւ սկզբունքները: Դաւանինք ճշմարիտը, և գործել տանք անոր:

Աստուծոյ գաղափարը իր ամբողջ պարունակութեամբ, իր բոլոր հետեանքներով, քաղաքակրթութիւններու կը հայթայթէ իրենց իսէալ վախճանները. ան կը պաշտպանէ զանոնք խոտորումներէ, ան կարճ կը կապէ կործանարար վարդապետութիւնները եւ ընթացքները. կարգաւորող եւ մղող, ան՝ կը ձգուի էակներու և ոյժերու ներդաշնակման. ան՝ զանոնք կը պաշտպանէ իրենց ցրւումին դէմ, առաջքը կ'առնէ անոնց քաօսին, կ'ըլլայ աղդակ խաղաղութեան և կարգի, սիրոյ և աճման, փոխանակ պայքարներուն և մշտական վերսկսումներուն:

Աստուծոյ մտածումը կը հեռացնէ զմեզ այս աշխարհէն, կ'ըսեն. այս, որքան որ աշխարհը անկման փորձութիւն մըն է եւ առարկայ մը եսապաշտութեան. բայց այդ մտածումը կը մօտեցնէ զմեզ աշխարհին, որքան որ այս վերջինը ինքն իսկ գործն է Աստուծոյ. Աստուծոյ գործունէութեան դաշտը, յոյսը Աստուծոյ և իր հայրական նախախնամութեան: Զէ կարելի ինքինքը տալ Աստուծոյ սիրոյն, առանց հետեւելու անոր զառիթափին: Այդ սէրը ստեղծագործող է. անով մինք ևս կ'ուղենք կեանք ստեղծել, փրկող է ան. անով կ'ուղենք վեր բարձրացնել և խաղաղեցնել աշխարհը: Հեռի հրաժարողութենէ, ատոր համար պէտք պիտի ըլլայ ձեռք առնել բոլոր արժէքները՝ ծանօթութեան արժէքներ, եւ գործնական արժէքներ, անոնցմով կազմելու համար մենք մեզի գործունէութեան արդիւնաւոր գործիքներ:

Աստուծոյ մտածումը կը ներշնչէ խո-

նարհութիւն. բայց տկարութիւնն մըն է արդեօք այդ վսեմ խոնարհութիւնը որ մարդկաւթիւնը կը գնէ իր ճշմարիտ տեղը, Աստուծոյ գահի ոտքին, հպարտ՝ իր դուստրը ըլլալուն, եւ ունենալ բարձր առաջելութիւն մը իր տիեզերքին մէջ: Անհուն այն անապատը՝ ուր կը գնէ մեզ անաստուածութիւնը, անշուշտ նուալ զօրացուցիչ է. ան մեզ կ'ընէ կորսուած գաւակները ըստեղծագործութեան, սահմանուած՝ լիլիրութեան և անօգուտ գործի մը:

Պաշտամունքը, մեծարանքը, ամենավոհմ և ամենաբեղուն պաշտօններէն մէջն է հոգւոյն: Բայց մենք զայն ալեւս չենք հասկնար: Մենք կ'երազենք՝ արտադրութիւն և սպառում, ծախսեր և հասոյթներ: Յառաջդիմութիւնը մեզի համար մոլորակին չուրջ աւելի արագ վազեն է, և մեր խեղճ գասակարգերը աւելի շատ նիւթական հաճոյքներու բարձրացնելն է: Այս բոլորը լաւ պիտի ըլլար, իր կարգին. բայց միայն զայն հետապնդելով հոգիները կը ցամքին, կը կարծրանան, կ'եղծանին, եւ կամ կը վհատին: «Ինչ կ'արժէ» մը կը սպրդի այն սրտերուն մէջ, զորս գոհացնել թուած է յաջողութիւնը. գառնութիւն մը՝ միւսներուն մէջ: Մարզիկ կեանքին հետզհետէ նուալ կը կապուին որքան ան կը բարգաւաճի. և մարդիկ յուսահատօրէն կը կառչին անոր երբ անիկա խոյս կուտայ իրենցինք: Ներքին ոչ մէկ հաւասարակշուութիւն. վասն զի առանցքը կը պակսի. և հոգիներու անկայունութիւնը չէ միթէ որ կը սարսէ քաղաքակրթութիւնները:

Հեռու թշնամին ըլլալէ կեանքին, Աստուած, անոր ճանաչողութեան համար պատկերացման կեղքոնակէտն է. կենսաւորողը՝ բարոյական ներշնչումով, երաշխաւորողը՝ իր օրէնքով, դատաւորը՝ այն եւքերով զորս կը հայթայթէ ան՝ մարդոց ճիշդին: Հոգին մոռնալու վրայ է թէ ինքանմահէ, եւ կը մեռնի այդ մոռացման պատճառու: Բոլորովին գարձած գէպի աստեղորը, ան ցամքիլը կը տեսնէ իր հոգեոր կեանքին, և իր բարոյական խղճմտանքին. ան չուտով հակամէտ կը գառնայ չարաչար գործածել ամէն ինչ և ինքինքը, մանելու մըրցակցութեան և պայքարի՝ կեղծ բարիքներու համար. և հոդէ, հոդ միայն, որ ընդհանրական անկարգութիւնը կ'առնէ իր սկիզբը:

Մեր գրադէտներէն մին վերջերս կը պահանջէր, «նաւազախումբ մը գտնձով քեռնաւոր վաղեմի նաւուն համար»։ իրաւունք ունէր բայց նաւազախումբը չի բաւեր, կողմնացոյց մը պէտք է, աստղ մը պէտք է։ Ի զուր չէ որ Փրկիչ Աստուած, Յայտնութեան մէջ ինքինք կոչած է Աստղ առաւօտու։

Քրիստոնեայ Աստուածը։ — Քրիստոնեայ մը պիտի աւելցնէր թէ աստուածայինին գործոն աշխատակցութիւնը հոգւոյն մէջ, եւ ոչ միայն անոր մտածումը եւ պաշտամունքը, առաջին անհրաժեշտութիւն մընէ։ Կարելի չէ մինակը ինքզինքը զարգացնել, ինչպէս որ կարելի չէ ինքզինքը ստեղծել, այդ երկուքը նոյն բանն են։ Զարգացում մը՝ ստեղծագործութիւն մընէ միայն որ կը շարունակուի։ Հեռացած իր հոգեոր ստեղծիչն, և զրկուած անոր օժանդակութենէն, մարդը, կիյնայ նիւթականութեան շաւղին մէջ։ Եթէ այն ատեն կը կարծէ յառաջդիմել, վասնդի ան մեքենականութիւններ կը լարէ և կը յաջողցնէ զիտուն կազմակերպութիւններ, իրականութեան մէջ աւելի եւս կը իրի անոնց մէջ ինք։ իւրաքանչիւր օր աւելի ամրապէս կը չլթայուի ինք Պրոմէթէի քարաժայուին, և անգըլ կը փաղալէ զինքը։

Այսպէս կոչ ընելով շնորհքին, այսինքն կրօնքին, իր ամենէն յատկանշական եւ նուիրական բաժնին մէջ, կը հեռանանք քիչ մը առարկայէն, բայց անկասկած է որ եթէ մենք մօտեցանք Աստուծոյ հարցին, ատիկա վերացական աստուածեանութեան մը ինպաստ չէր, որ քիչ օգտակար պիտի ըլլար, եթէ ան չճշգրտուէր և չզոյացաւուրուէր կրօնական կեանքի մը մէջ։ Ծանօթէ սա խօսքը 19րդ դարու մեր սրամիտ մարդերէն մէկուն։ «աստուածեանը մարդ մընէ որ իր կարճ գոյութեան մէջ, ժամանակ չէ ունեցած անաստուած ըլլալու»։ Արդարեւ, Աստուծոյ գաղափարը՝ կրօնական ձեր մը տակ միայն գործած է այս աշխատհին մէջ։ Աստուածեանութիւնը անորոշ իրաստափրութիւն մըն է միայն։ ներկայ քաղաքակերթ աշխարհը իր զաւակը չէ, այլ քրիստոնէութեան զաւակը, և բոլոր այն արժէքները որոնք կը մնան մեզի, և որոնք նոր կը կարծուին՝ մարդկային անձին յարգանք, հաւասարութիւն կեանքին առջև,

աշխատանքի սրբութիւն, անհատներու և ժողովուրդներու եղբայրութիւն, անջատուած բեկորներ են այն բանէն, որ անոնց միտութիւնը և զօրութիւնը կը կալմէր, որ է քրիստոնէարար ապրուած հաւատք մը Աստուծոյ։

Ապադային համար ևս նոյնը պիտի ըլլայ, այլապէս շահը պիտի ըլլար ոչինչ։ Խնչ որ պէտք է քաղաքակրթութիւնը փըրկելու համար, «իմաստասէրներու և գիտուններու աստուածը» չէ միայն, այլ «Աքրահամի, հսահակի և Յակոբի Աստուածը», այսինքն, պատմութեան մէջ իրապէս գործող Աստուածը։ ամբոխներուն Աստուածը և հոգիներուն Աստուածը, Աստուած մը որուն կարելի ըլլայ խօսիլ և որ պատախանէ, զոր կարելի ըլլայ ոգեկոչել և որ օգնութեան հասնի, զոր կարելի ըլլայ սիրել, և որ սիրէ, զոր կարելի ըլլայ վրկայութեան կոչել, և որ գատաւոր կանգնի, որ ունենայ ամենուն համար բարերար կամք մը, և որ զայն յայտարարէ։ որուն գործին կարելի ըլլայ օժանդակել, և որ օգնէ ձեզի՝ ձեր գործին մէջ, մտերմիկ համագործակցութեամբ մը, Աստուած-մարդկային ընտանեկան կեանքով մը, ինչպէս որ Յիսուս զայն մեզի առաջարկեց, Աստուած մը որ զթայ անոնց վրայ, որոնք կը տառապին, և բարձրացնէ զանոնք՝ որոնք կը մեղանչեն, որ նախասիրութիւն մը ունենայ լքեալներուն և խոնահներուն համար, որ օրհնէ աշխատանքը, և աշխատաւորին համար պահանջէ արդար վարձքը, զոր պարտական են իրեն, որ համախմբէ աղջերը եղբայրական միաբանութեան մը մէջ, մերձեցնէ հեռաւոր հոգիները, և միաւորէ ցեղերը յանուն իրեն։ Աստուած մը որ ըլլայ հայր մը, մեծաւոր մը, օրէնք մը, կապ մը, մտածում մը որ կը լուսաւորէ, սիրտ մը որ կ'սպասէ, վերջապէս Աստուած։

Վասնզի այս բոլորով է միայն որ քրիստոնէութեան ծոցին մէջ փթթած հոգի մը կրօնայ ճանչնալ իր Աստուածը, Ան՝ որ իրեն կրօնայ առաջարկուիլ իրբու ապաւէն մը, և որմէ ան պիտի կրօնայ սպասել բան մը։

ՍէրթիթԱնժ  
Թրգմ. Գրիգոր Աբեղսա

## ՔԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ

### ԱԱՏՆԵՐԸ...

ՀԵՌԱՑՈՂ ՄԵԾ ՀՊԳԻՆԵՐՈՒՆ...

Բաժնը եցայ միամիտ, զայի դաշտէն ան առտուն...  
Սլրտիս՝ մոխիր ու կըրակ, վէրքը՝ անմար, յոյսերուն:  
— Թափուր հոգի որ կուգար Ս. Յակոբայ ըսկինին  
Մատաղ նըշխար մը ինչպէս, ինձգինքն ընծայ բերելու:

Տեսեր աստղերն էի ես նոր օրերու Քու փառքին:  
Մեծ վարպետներ նաւասի, զերդ փարոսներ ոսկեղէն,  
— Մուրին մէջէն մեզ նայող — առած նամբան իրենց խոր...  
Բայց լոյսն որոնց կը մընար մեզի պայծառ արահետ:  
Դուք մեծ դէմքեր նեռացող, ընդդիւս, մեզմէ բայց միւս մեզ  
Չեր բաղցը կամքը խօսող, աստեղատիւլ բարբառով:

\* \* \*

Կարաւանն այդ վեհառու, աստեղատուն է հիմա,  
Ալերն ի վեր անցեալին, կամար ոսկի, սրբասնւն.  
Մեզ կը տեսնէ՞ն, մեր պարման խանդը մեզի ներելով,  
Երբ մուրին դէմ, առանձին, ափ մը մարդիկ, բով բովի  
Կը յամառինք վառ պահել ջահը հազար ամերուն:

ՏԵՐՈՒԽԻ



## ԿԱՐՈՏ

ՏԵՐՈՒՆԻ ԱԲԵՂԱՅԻՆ

Խմ մանկութեան օրերուն, թեւերուս մէջ ֆեզ տրին.  
Սղուոր էիր, ինչպէս պարտին ըլլալ է մեր Երազին:  
Սակայն, նըման իմ դէմքին, դէմքը յրսակ էր այնին,  
Սչերուդ մէջ, իմ հոգին, զրտաւ իր բաղցը օրրան...:

**Զէի տեսներ:** Թարմ մըօուս հոգին է մերը: Բայց ինձ հետ,  
Քիչ մ'ամէն օր կ'անէիր, բաժնըւելով Երկինքէդ.  
Հոգւոյդ ծովուն դէմ կապոյս, հոգիս արեւն իր բացեր՝  
Տեսիլներու առեր թե: Դուն ամբողջ իմս էիր դեռ...:

Ու ես մեծցայ — ի՞նչ կանուխ — դուն լրոեցի՛ր, հեռացա՛ր.  
Դո՛ւն՝ հոգւոյս մէջ ուրացուա՛ծ՝ մոռնալ չէի ֆեզ կրտնար...:  
Հիմա կանգնած եմ մինակ, թեւես արձակ՝ ետևէդ.  
Տագնապն այս նոր, մի՛ գուցէ սիրտը տանի իրեն հետ...:

Ի՞նչպէս եւ ո՞ւր ֆեզ փնտում, իի՛ն իմ Երազ... մո՛ւր խորան.  
Ս.նցա՞ր անդին Երկինքէն, թէ մարդոց մօսն ես զերի,  
Մարդո՞ց՝ որոնց սլրտերուն յանախ մըքին է համբան,  
Որոնց աւեր է հոգին, ու դուռը փակ՝ դէմ ֆեզի...:

Ս.նոնց մէջ ես չկարենամ թերեւըս զի՞ս իսկ հանչնալ:  
Քեզմո՞վ ինչզինս եմ նանչցեր, ֆեզմո՞վ՝ հոգիս, մարդերն ալ:  
Այժմը ֆեզի՛ եմ դարձեր, որ դո՞ւն գտնես զիս կրկին,  
Ու կուրծքիս դէմ, ըզզա՞մ ֆեզ, հրճուանելով նոյն մանուկին...:

Քեզմէ հեռու, իի՛ն Երազ, նորէն կարօսըդ ունիմ...:

Թ. Ս. Մ.



## ԿՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ

### ՔԵՐԻՆԵՐՈՒ ԿՐՈՆՔ ՄԸ ԶԷ

Ի՞նչ է քրիստոնէական կրօնի արժէքը, մարդկային կամքի և կորովի մշակման ահասակէտէն զիտուած: Ամանք այն կարծիքն ունին թէ քրիստոնէութիւնը թոյլ կրօնք մըն է, և կամքէ ու կորովէ, ջիղէ ու առնականութենէ զուրկ երկարանի ոչխանեւրու հօտ մը միայն կը սնուցանէ: Այդ ըմբռումէն մեկնելով անոնք կը վարդապետեն թէ Հայ ազգին զլիուն եկած ահաւոր և անվերջ փորձանքներուն պատճառն է քրիստոնէական կրօնը: Այսքան ծանր հաւաստում մը կուրաբար ընդունելէ առաջ պարտաւոր ենք քննել իրականութիւնները ջինջ լոյսի մը ճառագայթիներուն տակ:

Ի՞նչ եղած են Հայերը իրեւ ոյժ քրիստոնէութենէն առաջ, Վեց դարերու պատմական շրջան մը մեր առջև կը դնէ օտար լուծերու յաջորդութիւն մը — Մար, Պարսիկ, Մակեդոնական, Սելեսկեան — մինչև որ Արտաշէս մը կու գայ ազատութեան գրօշը բարձրացնելու, որ սակայն կը խոնարհի Սելեսկեան հարուածին տակ. Եւ ի վերջոյ Տիգրան մը կը ֆայլի, այն ալ, աւա՛զ, կը նսեմանայ հսովմէական արծիւներու ստուերին ներքեւ: Խակ Տիգրանի յաջորդները կը տատանին շարունակ հսովմէական ու պարթեական ծովերու յարածուփակներուն վրայ:

Քրիստոնէական առաջին երեք դարերուն մեր հեթանոս արքաներէն ամենէն զօրաւորներն իսկ նոյն հոսանքներուն գերի են, և հզօրն Տրդատ անզամ իր գահը կը պարտի հսովմէական լէգէոններուն և թեւարկութեան: Այս է եղած իրողութիւնը նախ քան մեր արքայական տան, իշխաններուն և ժողովուրդին միահամուռ քրիստոնեայ գառնալը. իրողութիւն մը՝ որ այսքան ալ շողշողուն չէ, ինչպէս կը ճգնին ցոյց տալ քրիստոնէութիւնը պախարակող ճամարտակները:

Այժմ տեսնենք թէ ինչ փոփոխութիւն

յառաջացուց նոր կրօնքը մեր ոյժին անման կամ նուազման տեսակէտով: Մեծն Տրդատի յաջորդները ընդհանրապէս եղան միջակ կամ տկար թագաւորներ, զինուուրական տեսակէտով. գիւանագիտական յաջողակութեան տուրքէն ալ զուրկ էին գրեթէ: Այնպէս որ Հայաստան հետզհետէ տկարացաւ, մասնաւորաբար Սասանեաններու թշնամութեանց երեսէն, իսկ Բիւզանդիան չկրցաւ ցոյց տալ հարկ եղած կորովը և ոյժը, հայկական թագաւորութեան տեսականացումը ապահովելու համար. ընդհանրական յաճախ սակարկութեան մտաւ Պարսից հետ ի վեաս Հայաստանի:

Արշակունիաց գահը մեծ թշնամի մը ունէր յանձին Սասանեաններու, ստորգ է, բայց այդ թշնամութիւնը որչափ կրօնական նոյնչափ և տոհմային պատճառներէ կը ըրխէր: Սասանեանները, Պարսից գահէն Պարթևները նետելէ յետոյ, վերջիններուն կողմէ ըլլալիք ունէ ոտնձգութեան առաջքն առնելու համար, որոշած էին Հայոց գահէն ալ հեռացնել զանոնք: Եւ ի վերջոյ յաջուղեցան այդ նպատակին մէջ: Արշակունիաց թագաւորութեան կործանումը հետեւնքն էր բազմապիսի պատճառներու. զոր օրնախարաբական մրցակցութիւններ և կիրքեր, արքայական անընդունակութիւն, արտաքին՝ բիւզանդական օժանդակութեան չքացում և մանաւանդ պարսկական դաւերու ճնշումներ, ևայլն:

Թագաւորութեան բարձումէն յետոյ հայ կեանքը կը շարունակէր իր ընթացքը, հետզհետէ աւելի տողորուելով քրիստոնէական ոգիով, առանց կործնցնելու իր մարտական քաջութիւնը և եռանզը. ապացոյց՝ Վարդանանց պատերազմը, զոր կը տարփողենք իրեւ մին մեր զինուուրական զսեմ խիզախութիւններէն: Կ'արժէ զիւտել տալ որ այդ կուիւին ողնայարը կազմող Վարդան, խորապէս քրիստոնեայ անձ մըն էր:

Յաջորդով չորս դարերը արիւնոտ էջեր աւելցուցին մեր պատճութեան վրայ: Աւրեւեան, արևմտեան և մանաւանդ հարաւային կողմերէն ծաւալող աշխարհակալ բանակներ յաջորդաբար ոտնակին ըրին անբախտ Հայաստանը: Ժողովուրդը ի վիճակի չէր բաժան բաժան ոյժերով յաջողապէս

գիմադրելու այգախիսի հզօր արշաւանքներու. ուստի կամայ ակամայ վիզը ծռեց օտար լուծերու տակ, սպասելով նպաստաւոր հանգամանքներու՝ ողջունելու համար իր ըլձալի ազատութեան արձալոյրը:

Հայկական նոր թագաւորութեանց — Բագրատոնի, Արծրունի, Խուբինեան — հետզհետէ հաստատումը կը ցուցնէ որ քրիստոնէութիւնը չէր մահացուցած մեր ցեղին մարտական ընդունակութիւնները: Խուբինեան թագաւորներ մասնաւորաբար՝ ունեցան անկախութեան այնպիսի առաջան մը որմէ զուրկ մնացած էին Արշակունի թաղաւորներ: Հայկական դէնքերը, ընդգէմ ոչ քրիստոնէից, արձանագրեցին այնպիսի յաջողութիւններ, որոնք կը բաւեն լիովին՝ կարկեցնելու քրիստոնէութիւնը իրք թոյլ ու մեղկ պախարակող անդունքները:

Թոգունք ազգային պատմութիւնը եւ ձեռք առնենք օտար աղջերունը, և պիտի տեսնենք պարզապէս շարաններ ապացոյցներու, որոնք կ'ալզաղակեն թէ քրիստոնէական կրօնքը իր հետեօրդները չի թուլցնիր, և չի զրկիր հերոսական եռանդէ: Զայց կ'ընենք այդ անհամար փաստերը և կը բաւականանք միայն մատնանշելով որ այսօր աշխարհի մեծագոյն պետութիւններէն չատերը քրիստոնեա՛յ պետութիւններ են, և մէկ քանին մեծագոյն աշխարհականեր, որոնց գրօշին տակ կը բարգաւաճին ոչ քրիստոնեայ միլիոնաւոր զանգուածներ: Այս միայն կը բաւէր ցոյց տալու թէ քրիստոնէութիւնը հեռու է պարտուղական ողիի գայեակ հանդիսանալու տիսուր պաշտօնէն, ինչպէս կը մեղազրեն զայն յանիրաւի՝ իր տղէտ եւ չարամիտ թշնամիները:

Ն. Վ. ՊՈՂԱՐԵՍԻՆ



## ՅԱԿՈԲՈՍՆԵՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԷՋ

Նախնական եկեղեցւոյ անձերուն մէջ, Յակոբոսները զիւրաւ տեղի տուած են շփոթութեան:

Միայն երկո՞՞ Յակոբոսներ կան արգեօք մեր Փրկչին շրջանակին մէջ, թէ երե՞ք Անտարակոյս, նոր հարց մը չէ այս, քանի որ կը վերանայ մինչև քրիստոնէութեան սկիզբը, և այս իսկ պատճառաւ իր կարեռութիւնը միշտ արդիական և հետաքրքրական կը մնայ: Երուսաղէմ՝ հայոց Արքոց Յակոբեանց մայրավանքին մէջ կը գտնուի Զերեղիայի որդւոյն՝ Յակոբոս Առաքեալին Գլխազիրը (= զլիսու գերեզման), ինչպէս նաև Երուսաղէմի առաջին եպիսկոպոսին Առաքելական Ս. Աթոռը, թէև այս վերջնոյն գերեզմանը Յովասփատու ձորին մէջ ցոյց կը տրուի, իսկ իր քարկոծման վայրը տաճարին հարթավայրին հարաւարեւելեան անկիւնին մօտ:

Մենք մանրամասնորէն պիտի քննենք խնդիրը, ուսումնասիրելով նոր Կտակարանը, առանց զանց ընելու աւանդութիւնը և արտաքին հեղինակները:

## ԶԵԲԵԴԻԱՅԻ ՈՐԴԻՒՆ՝ ԶԵԲԵԴԻԱՆ ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԸ

Աւետարանիչները առաքելոց իրենց անուանակոչութիւններուն մէջ կը յիշեն երկու Յակոբոսներ. ասոնցմէ առաջինը Զերեղիայի որդին Յակոբոս առաքեալն է, երբայրը Յովհաննէս աւետարանիչի: Այս երկու հարազատ եղբայլները, բնիկ Բեթայիղացի էին — քաղաք մը Տիբերական ծովուն արևմտեան ափերուն վրայ — և արհեստով ձկնորս. Յիսուս իրեն կանչեց զիւրենք. «Եկայք զկնի իմ, և արարից զձեղ որսորդս մարգական» (Մատթ. Դ. 19): Այս երկուքը Յիսուսի կողմէն կոչուեցան «Բաներեքս», «Որդիք Որոտման» (որոտումի որդիներ):

Այս Յակոբոս Զերեղեան Առաքեալը, իր եղբայրը Յովհաննէս, և Պետրոսը, Տիբրոջ երեք սիրելագոյն առաքեալներէն էին, և Անոր հետ միասին ներկայ գտնուեցան Յայրոսի աղջկան յարութեան, Թաբոր լե-

րան վրայ կատարուած Պայծառակերպութեան, և Դեմքսեմանիի տագնապին (Մարկ. Դ. 35-43, Մատթ. Ժէ. 1-3, Մարկ. Թ. 1-12, Ղկո. Թ. 28-36, Մարկ. Ժ. 32-34): Հերոնիմոսի վերագրուած լատինական հին աւանդութեան մը համաձայն, Մեծն (Le Majeur) Յակոբոս կոչուած է ան, մակղիր մը որ Աւետարաններուն մէջ գոյութիւն չունի: Ան երկոտասան առաքեալներէն առաջին նահատակը եղաւ որ իր արիւնը տուաւ Քրիստոսի սիրոյն, և Ս. Երուսաղէմի մէջ գլխատուեցաւ 42 (կամ 44) թուականին, Հերովդէս-Ազրիպասի հրամանաւ, «Եւ սպան զՅակովոս, զեղբայր Յովհաննու, սրով» (Պործ. Առաք. ԺԲ. 2):

### ՅԱԿՈԲՈՍ ԱԼՓԵԱՅ

Երկոտասան առաքեալներուն մէջ յիշուած երկրորդ Յակոբոսը Ալփէսոսի որդին է, Յակոբոս Ալփեայ կոչուած, որ ուներ Յուղա անունով եղբայր մը, և որ կը կոչուի նաև Յուղա-Թալէսո, նախապէս Դերէսոս անունով ծանօթ:

Բացի առաքելոց այս անուանակոչութենէն, Յակոբոս Ալփեայի մասին, սրբազն հեղինակներու մօտ ուէ յիշատակութիւն գոյութիւն չունի:

### ԿՐՏՈՒՅՆ ՅԱԿՈԲՈՍ

«ՏԵՍՈՒՆԵՂԲԱՑՐ» (\*) Ա.Ռ.Ա.ՔԵԱԼ

Մատթէոս, Մարկոս և Ղուկաս աւետարանիները կը յիշեն Պողոսթայի վրայ ներկայութիւնը կնոջ մը, Մարիամ անունով, որ էր աՅակովոս Փոքրկան և Յովսեայ մայրն» (Մարկ. ԺԵ. 40, Մատթ. Խ. 56, Ղկո. Խ. 10): Վերոյիշեալ Յակոբոս կը քաւեր կամ փոքրը և Յովսէոը, Յուղա և Սիմէոն անուններով երկու ուրիշ եղբայրներ ևս ունեին: Վերոյիշեալ չորս եղբայրները «Տեառնեղբայր» կոչուած են:

Ղուկաս Աւետարանիչ իր Գործք Առաքելոցին մէջ բազմից կը յիշէ Յակոբոս անունով անձ մը, առանց սակայն ճշգելու անոր ունեցած առաւելութիւնը, որ, չուրջ առաջին գարու կիսուն, Ս. Երուսաղէմի մէջ շատ կարեոր գեր մը կը կատարէ:

(\*) Ծանօթ է որ, Հետից մէջ, մօիկ ազգականները «Եղբայր» կը կոչուէին, ինչպէս Եղբայրդիներ, Խօնդորդիներ եւն:

Միւս կողմէն Պօղոս Առաքեալի, իր առ Գաղտացիս թուղթէն կը հաօկնանք թէ այս անձը անտարակոյս «Տեառնեղբայր» կոչուած Յակոբոս Առաքեալն է: Գիտենք նոյնպէս թէ, Հեկիսիպապոսի և Կղեմէս Աղքասանպացիին (Բ. զար) վկայութեանց համաձայն, Յակոբոս «Տեառնեղբայր» Առաքեալը, Ս. Երուսաղէմի առաջին եպիսկոպոսը եղաւ. գարձեալ քրիստոնէական հնամենի աւանդութիւնը զայն կոչուած է ԱՄբրդարն Յակոբոսու, մակղիր մը՝ որ ցոյց կուտայ իր խստամբերութիւնը և սրբութիւնը: Վերջապէս, Յովսեփոս անոր փառաւոր վախճանը մեկի ցոյց կուտայ. «Ծերուեկ Անանիք(\*) որդին, Անան քահանայապետը, Սինեամբինի մէջ ժողով գումարելով, անոր առջեւ ամբաստանեց Յակոբոսը, եղբայրն Յիսուսի, որ կոչուած է նաև Քրիստոս», իսկ ըստ այլոց, օրինազանցութեան պատճառաւ քարկոծել տուաւ զայն: (\*\*)

### ԽՆԴԻՐԸ

Ուրեմն, ըստ երեսոյթին շատ որոշ կերպով երեք Յակոբոս անունով անձեր կան մեր Տիրոջ ըրջանակին մէջ.

ա) Զերեղիայի որդին Յակոբոս Առաքեալ,

բ) Ալփէսոսի որդին Յակոբոս Առաքեալ,

զ) «Տեառնեղբայր» Յակոբոս Առաքեալ.

ասոնցմէ առաջին երկուքը առաքելական խումբին մաս կը կազմին:

Ոյսուամենայնիւ, սուրբ գլուկան ամենին շատ տարածուած կարծիքներու համաձայն, ասոնցմէ երկուքը միայն կը ճանչցուին, ենթադրելով որ Ալփէսոսի որդին Յակոբոս Առաքեալը ուրիշ մէկը չէ, եթէ ոչ նոյնինքն «Տեառնեղբայր» Յակոբոս Առաքեալը, Ս. Երուսաղէմի առաջին եպիսկոպոսը, որ «Արդար» տիտղոսը կը կրէ: Ահաւասիկ բուն խնդիրը զոր պէտք է լուծել: Ուստի մէկ կողմ կը ձգենք Զերեղիայի որդին Յակոբոս Առաքեալը, և մեր ուսումնասիրութեան մէջ լոկ Ալփիայի որդին Յակոբոս Առաքեալը և «Տեառնեղբայր» կոչուած Յակոբոս Առաքեալը ուշա-

(\*) Այս Ներուկ Անան կամ Աննան այն հանանապեսն եւ, որուն առջեւ Յիսուս ատեան եկա, Աւազ-Հմազարքի զիսերը (Յովհ. ԺԲ. 13):

(\*\*) Հնախօսութիւն Հետից, Խ. 9. Սարօնի Ռէյնարդ վիայարեամբ, յանիրաւ կը բուի մերժել այս հատուածին վաւերականութիւնը:

գրութեան առարկայ կ'ուզենք ընել, ջանալով կարելիութեան սահմանին մէջ վերայիշեալ երկու Յակոբոսներու նոյնութեան, նոյնացման և կամ զանազանութեան պարագաները ճշգել ու յայտադրել:

### Ա. Խ. Ա. Դ. Ո. Խ. Թ. Ի. Ի. Ն. Բ.

Եկեղեցական հայրերու և հին մատենագիրներու կողմէն, ոչ մէկ որոշ փաստ և վկայութիւն կարելի չէ ձեռք բերել, վասն զի անոնք այս խոնդրոյն անուղղակիօրէն մօտեցած են, Ս. Մարիամի կուսութեան և Յովոչիի մասին վիճաբանութեանց առիթներով միայն։ Առողմէ երկուքը մասնաւորաբար, ձանաչումներու (Recognitions) հեղինակը (Դ. դար), ապա՝ կեսարիոյ Եւստիս եպիսկոպոսը (Դ. դար) մեզի կործել կուտան թէ այդ երկու անուանակիցները կը զանազանուէին իրաբմէ։ Բայց այս վերջնը, նկատի առնելով մանաւանդ այդ ժամանակուան կեսարիոյ և Երուսաղէմի երկու եկեղեցիներուն միջն տիրող փառքի, աստիճանի, դիրքի և գերազահութեան համար մզուած պայքարները, խոնդիրներն ու հակառակութիւնները, թերեւս շահ ունէր չքարձրացնելու Սուրբ Քաջաքին վարկը, անոր Առաքելական Ս. Աթոռին ընծայելով երկոտասան Առաքեալներէն մին՝ իրեն առաջին եպիսկոպոս մ'ունենալու պատիւն ու փառքը։

Երկու անձերուն նոյնացման աւանդութեան կը հանդիպինք Պաղեստինի հին եկեղեցին մէջ, Հեկեսիպոսի (Բ. դար), Սուրբն Կիւրեղ Երուսաղէմացի (Դ. դար), Հեղիքիուսի (Ե. դար), Սուրբ Քաղաքին Վ. դար), Սուրբ Քաղաքին Վ. քացական Տօմարին թարգմանութեան և մեկնութեան (Թ.-Փ. դար) վկայութիւններով։ Աղեքսանդրիոյ եկեղեցին մէջ կղեմէս Աղեքսանդրացիով (Բ. և Գ. դարեր) և Որոգինէսով, Յունական եկեղեցին մէջ Սուրբն Յովկան Ոսկերերանով (Դ. դար), իսկ Ասորական եկեղեցին մէջ իրենց կիրարկած տոմարով և ծիսաբանով՝ վերագրուած Յակոբոս «Տեառնեղայր» Առաքելոյն։

Այս մասին Լատին եկեղեցւոյ աւանդութիւնը աւելի յստակ և որոշ է։ Բ. դարէն սկսեալ Զեբեղեան Յակոբոս Առաքեալն Մեծն Յակոբոս անունը կուտայ ան, դանազանելու համար անշուշտ Փոքր Յա-

կոբոսէն, որ առաքելական խումբին մէջ ըլլալով հանդերձ, անուանակից էր անոր, մինչզեռ այս վերջին անուանումը վուլկաթային մէջ տրուած է «Տեառնեղբօր» խոկ «Փոքր» բառը, Աւետարանին Յունարէն բնազրին մէջ կը կրէ պարզապէս «Փոքր Յակոբոս»։

Այս պատճառաւ, Հերոնիմսս, իբրև վկայայս աւանդութեան, այսպէս կ'առարկէ։ Ընչէպէս ու բեմն երրորդ Յակոբոս մը «Փոքր» պիտի կոչուի, իբրմէն աւելի մեծէ մը զանազանուելու համար, քանի որ, «միծ» և «Փոքր» բառերու սովորական գործածութիւնը մեզի ցոյց կուտայ տարբերութիւնը երկու անձերու, երկու բաներու և ոչ թէ երեք անձերու։ Տրիտենդեան ժողովին հայրելը (1545—1563), չեն վարանիր վաւերացնելու լատինական այս աւանդութիւնը, երբ կ'ըսեն թէ՝ Վերջին Օծման խորհուրդներու կամ կարգը յանձնաբարուած և գրուած է «Տեառնեղբայր» Յակոբոս Առաքեալի կողմէն» (Նիստ ԺԴ. Վասն ի վերայ Վերջին Օծման, Գլուխ Ա.)։

Արդի ժամանակներու մէջ, Յակոբոս անունով երկու անուանակից անձերուն նոյնացումը ճանչցուած եւ ընդունուած է շատ մը զիտուններու և Ս. Գրոց մեկնիչներու կողմէն, ինչպէս են Պարոնիուս, Էսֆիրուս, Սուարէզ, Թիլըմօն, Մէնօքիուս, Մալտոնատ, Բաթրիզի, Կորնելիուս Ս. Լաբիտ, չենք լիւեր աւելի հանքածանօթները, և արդի ուղղափառ Ս. Գրոց մեկնիչներու և ծանօթ հեղինակներու և զիտուններու մեծամասնութիւնը։

Թուղթ առ Գաղատացի (Ա. 19).— Այս հատուածին մէջ, Սուրբն Պօղոս Առաքեալ կը զրէ Գաղատիոյ քրիստոնէից, որոնք քրիստոնէութեան դարձան և նոր կրօնքը ընդգրկած էին։ «Ապա յետ երից ամաց ելի յերուսաղէմ տեսանել զՊետրոս, և եղէ առ նմա աւուրս հնդետասասն։ Զայլ ոք յառաքելոց անտի ոչ տեսի, բայց միայն ըզնակովես զելլայրն Տեառն։» Այս է Յունարէն բնագրին բնական թարգմանութիւնը։ Այս Յակոբոս «Տեառնեղբայր» Առաքեալը զոր Պօղոս տեսաւ իր առաջին ճամբորգութեան ատեն Ս. Երուսաղէմի մէջ, չուրջ 41 թուականին, երկոտասան առաքեալներէն մէկն էր։ ուրեմն առանց վարանումի

կլնանք հաստատապէս ըսկէ թէ՝ ան՝ Ալփէսոսի որդին Յակոբոսն է. «Տեառնեղբայր» մակղիբով ծանօթ, որուն անձին նոյնացումը և կամ շփոթութիւնը կը պատկերանայ մեր մտքին: Բողոքականներէն յետոյ, կարգ մը ուրիշ Ս. Գրոց մեկնիչներ, այս հին աւանդութեան մասին, ինչ ինչ վերապահումներ ըրին, կոթնելով Ս. Գրոց բազմաթիւ հատուածներուն վրայ, ուր յունարէն ռէ-մէն բացատրութիւնը, որ հոս որոշիչ է և ոչ թէ բացայատիչ, բացառաբար կամ ի բաց առեալ իմաստը տալով անոր, փոխանակ սրայց միայնո՞ի:

Ահաւասիկ անոնց կողմէ առարկուած երկու գլխաւոր հատուածներէն: Յայտնութեան զրքին հեղինակը խօսելով անդունդին խորերէն մեկնող մարախներու մասին այսպէս կը զրէ: —

«Եւ ասացաւ նոցազիմի մեջիցեն խօսոյ երկրի և մի՛ ամենայն ծառոց, բայց միայն մարդոյ երկրայնոյ, որ ոչ ունիցին զինիք ի վերայ ճակատու իւրեանց» (Յայտ. Թ. 4):

Որոշ է որ ռէ-մէն յունարէն բացատրութիւնը կարելի չէ հոս օրացառաբար» կամ «ի բաց առեալ թարգմանել, վասնի՛ մարդիկ բոյսներու տեսակ մը դաս չեն կազմեր, կարելի չէ զանոնք բացառութիւն նկատել, այս պատճառաւ սրայց միայն աւանդութիւնը ի զօրու կը մեայ, միւս մեկնութեան անիմաստ ըլլալուն պատճառաւ:»

Սուրբն Մատթէոս աւետարանիչ, Յիսուսի խօսքերէն հետեւեալ մէջրերումը կ'ընէ իր Աւետարանին մէջ «Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր զոր արար Դաւիթ, յորժամքաղցեաւն, և որ ընդ նմայն էին. զիարդ եմուտ ի տունն Աստուծոյ և եկեր զհաց զառաջաւորութեանն, զոր ոչ էր օրէն նմաւտել, և ոչ՝ որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից» (Մատթ. ԺԲ. Յ-4):

Շատ յոտակ է որ, Դաւիթ թագաւորին և իր ընկերակիցներուն փախուստին ժամանակ, Ղետական քահանայից դասը անոնց հետ մաս չէր կազմեր, և հոս ևս քրայց միայն թարգմանութիւնը պարտադրիչ և հրամայական է: Վերոյիշեալ այս օրինակներուն վրայ հիմնուելով, բողոքական մեկնիչներ կը յաւակնին ըսելու թէ, պէտք է այս թարգմանութիւնը կիրարկել դաղատացւոց թուղթին համար ևս, ուր՝ Ս. Պողոս Առաքեալին գաղափարն է հետեւելը.

«Առաքեալներէն ոչ ոք տեսայ, բայց միայն աՏեառնեղբայր Յակոբոսը»: Այսպէսով անոնք աՏեառնեղբայրը երկուտասան առաքելոց խումբէն գուրս հանելու մարմաջմ'ունին:

Ասիկա, ինչպէս կ'ըսէ Հայր Լակրտնժ, ամբողջովին ձրի ենթադրութիւն կամ կիրարկում մըն է, վասնզի՛ եթէ չորս կամ հինգ և կամ աւելի թուով Ս. Գրական հատուածներ ուղենք մեկնուած և պարզաբանուած թարգմանել, աւելի բան մը ըրած չենք ըլլար, որովհետեւ անոնք բացարձակապէս Սեմական իմաստ ունին», ուրիշ խօսքով՝ անոնք բոլորն ալ Արամերէն լեզուի գարձուած քններ են, Յունարէն բառերով արտայայտուած: Յունարէն «Է-մէն» բացատրութիւնը միշտ օբայց միայն» կը նըշանակէ, այս է այս բառին բուն իմաստը, յոյն հեղինակներու քով այս բառը ասկէ ուրիշ իմաստ մը չունի ամենեին: Այդ բառին ուրիշ տարբեր իմաստ մը տալ կը նշանակէ այլափախիել անոր բուն իմաստը և նշանակութիւնը: հոս, արգէն խնդրին բնոյթը Սեմական լեզուէն յառաջ եկած ըլլալով, կերպով մը զայն կարելի է կոչել ունաբանութիւն՝ սեմական լեզուի:

Սուրբն Պօղոսի առ Գաղատացիս ուղղած բնագիրը ուրեմն ի՞նչպէս պիտի վերլուծենք և պարզաբանենք:

Ան՝ իր այս թուղթին մէջ «Տեառնեղբայր»ը միայն կը յիշէ, հետեւաբար պէտք է որ անոր բուն նշանակութեան երթանք, որ է օբայց միայն և ո՛չ թէ «ի բաց առեալ»: Վերի ինչպէս նաև ուրիշ տեղեր կիրարկուած Սեմական լեզուին յատուկ գարձուած քնները վերլուծելով, կարելի է զիտել տալ որ, անոնք բոլորն ալ իրենց կազմախօսական ձևին մէջ առանձնական իմաստներ ունին: Վասնի՛ բնագիրը իր ետին, շատ անգամներ լոելեայն հասկնալի իրողութիւններ կ'ունենայ, ինչպէս է վերև յիշուած պարագային մէջ:

Այսպէսով պարզաբանուած նախադասութիւնը կ'ըլլայ ընդունական, հետեւաբար, «Է-մէն» (բայց միայն) բառը մեզի կուտայ անոր բնական իմաստը և նշանակութիւնը:

Սուրբն Մատթէոս Աւետարանիչ, Դաւիթ թագաւորին և իր ընկերակիցներուն կողմէ Առաջաւորութեան հացը ուտելու պարագան բացարելուն առթիւ, ուրիշ լոելեայն իմաստ մըն ալ ունի, այսինքն՝

այդ արգելքը բոլոր մարդոց համար ալ նոյնն էր լնդհանրապէս, որուն իմաստը ամբողջացնելու համար կ'առելցնէ «բար միայն քանանալից» :

Նոյն բանը կը դիտուի Յայտնութեան բնագրին մէջն ալ, ևԵւ տսացաւ նոցա զի մի՛ մեղիցեն խոտոյ երկրի, և մի՛ ամենայն ծառոց, մի՛ (լոելեան հասկնալի) ամենայն մարդոյ երկրայնոյ, բայց միայն նոցա որ ոչ ունիցին զինիք ի վերայ ճակատու իւրեանցու:

Այս կերպով փորձենք ուրեմն մեկնել Սուրբն Պօղոս Առաքեալին առ Գաղատացիս ուղղած թուղթին բնագրին իմաստը:

Սակայն հոս բնագիրը ա՛յնքան յատակ և պայծառ է որ, ուրիշ տեղ մը երթալու պէտք չի մնար մեզի, եթէ ոչ առաքելոց խմբին, որոնցմէ մին՝ «Տեառնեղբայրո Յակոբոս Առաքեալը» կը պահսի իրենց մէջ:

Մեր այս բնագրին թարգմանութեան հակառակորդները հոն տեսնել կուզին տարբեր իմաստ մը այսպէս. — Պետրոս Առաքեալէն զատ, ոչ մէկ առաքեալ տեսայ, և ո՛չ ալ ուրիշ ունէ նշանաւոր եկեղեցական անձնաւորութիւն մը, ոչ ալ նախնական եկեղեցոյ պետերէն մէկը, որոնց կրնացի ենթարկուիլ, բացի Յակոբոս «Տեառնեղբայրո»էն: Ինչպէս կը տեսնուի, կ'ըսէ Հայր Լակրանժ, Զահնի կողմէ կատարուած Ս. Պօղոս Առաքեալին բնագրին յաւակնու վերարտացութիւնը՝ «Կարելի է ենթադրել բարդ, զժուարին և լուռ իմաստ մը», «Կարելի չէ ասկէ աւելի զժուարալուր, բարդ, զըժուարը մբունելի իմաստ մը ենթադրելց:

1. Վերջապէս, Սուրբն Պօղոս Առաքեալի համար տրուած վերոյիշեալ բացաւրութիւնը թէ՝ Սուրբ Երսուաղէմի մէջ, բացի Պետրոս և Յակոբոս առաքեալներէն, ուրիշ կարեոր անձեր տեսած չէ, ճշմարտութեան հակառակ եղած բան մը պիտի ըլլար, վասնդի՝ բատ Փորձք Առաքելոցի բարդատական հատուածի մը (Թ. 26-27), Պօղոս հոն տեսաւ նաև Բառնաբասը, որ երկու տասան առաքեալներէն յետոյ, ամենէն կարեոր և հեղինակաւոր անձնաւորութիւնն էր:

2. Նոյն ենթադրութիւնը հաշտ կը թուի ըլլալ այն նպատակին, զոր հեթանոսաց առաքեալը իր թուղթին մէջ կը հետապնդէ:

Խոսվութեանց և շփոթութեանց ընթացքին, անոր պաշտպանները իրենք զի-

րենք առաքելոց կողմէ զրկուած պատզամաւրները նկատելով, կը յաւակնէին ըսելու թէ՝ Պօղոս՝ հեղինակութիւն մը չունէր ամենսին, քանի որ ան՝ ո՛չ տեսած և ո՛չ ալ լսած էր Քրիստոսը. առաքեալները միայն, քրիստոնէութեան մասին զիտէին այն, զորս անօնք ուսած էին Ս. Երուսաղէմի մէջ, մինչդեռ ուրիշներ կ'ալլափոխէին իրենց վարդապետութիւնը, հրէական օրէնքները մերժելով:

Ուրեմն՝ Պօղոս յառաջ բերելով իր առաքելական հեղինակութիւնը, կ'ուզէ Գաղատացոց սպացուցանել թէ՝ ան իր վարդապետութիւնը ուղղակի Քրիստոսէն առած է, որ իրեն երկցած և ուսուցած է, և ո՛չ թէ Սուաքեալներէն կամ Պետրոսէն, որուն այցելած է Երուսաղէմի մէջ իր դարձն երեք տարիներ վերջը միայն:

Պօղոս ինքզինքը պաշտպանելու պէտք չունի, իրենց աշակերտած չըլլալուն համար. նոյնիսկ իր համբաւին աղարտիչները չեն համարձակիրնուազեցնել իր հեղինակութիւնը:

Այսուամենայնիւ յաւակնիլ ըսելու թէ՝ Պօղոս այդ տողերուն մէջ թաքուն միտք մ'ունի իր ետին, ձրի և քմածին ենթազրութիւն մըն է, որ յառաջ եկած է նախսապաշարուած բողոքականաց աղգեցութեամբ, որոնք՝ Ս. Մարիամ Սսուուածածնի կուսութեան գէմ կը հակառակին:

Բաղդատական հատուած մը Պործք Առաքելոցէն, ուժ կուտայ այս բնագրին բնական թարգմանութեան պէտքին: Սուրբն Ղուկաս Աւետարանիչ, հոն կը պատմէ Սուրբն Պօղոսի ժամանումը յԵրուսաղէմ, անոր գարձէն վերջ առաջին ճամբորդութեան միջոցին, և կ'ըսէ. «Իբրև եկն Սաւազոս յԵրուսաղէմ, լնդելանէր յարել յաշակերտուն. և ամենեքեան երկնէին ի նըմանէ, չհաւատային թէ իցէ աշակերտ Բայց Բառնաբայ առեալ զնա՝ ած առ առամեալմ» (Քրծք, Առաք. թ. 26-27):

Վերի թուղթին մէջ յիշատակուած «առաքեալմ» յոգնակի բառը մեզի կը ստիպէ ենթադրելու որ, երկուտասան առաքեալներէն մի՛ միայն Պետրոսը չէր որ ընդունեց Պօղոսի այցելութիւնը Սուրբ Քաղաքին մէջ, այլ և Յակոբոսը՝ որ Պետրոսի հետ միակ յիշատակուածն է:

Հայացուց՝ ՊԱՐԳԵՒ ՎՐԴ, ՎՐԹՈՒՆԵՍՈԱՆ (Նորուակէլլ)

## ՊԱՊԵՍԻՆԱՎՐԱԿԱՆ

ՆՈՐ ՊԵՂՈՒՄՆԵՐ

ՅՈՒԴԱՅԻ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ

Յուդայի անապատը կը տարածուի Արապահի, Մեռեալ ծովու և Յորդանան գետի արևմուտքէն մինչև Երեքով, ու կը ներկայացնէ մեծագոյն մասով անբնակ ու չոր ու ցամաք գաւառ մը։ Այս անապատը մէկն է Յուդայի երկիրը բարկացնող չորս մեծ մասերէն, որ ցամաքի երկար շերտի մը ձեռով ու խորտուբորտ զառիթափներով կը հասնի մինչև Մեռեալ ծով։ Երբ հիւսիսի մշակուած զաշտերը կը վերջանան, հետք հետէ կը սկսի զբեթէ միշտ չոր ուատիներով կտրատուած թլուրներու բաւիդ մը, որուն երեսը հազիւ թէ անձրեային եղանակներուն կը ճոխանայ շատ աղքատ բուսականութեամբ մը՝ որ ոչխարի և այծերու հօտերուն կ'ընծայէ կէս բաւարար մնունդ մը, խոտերով ու մացաներով։ Այս եղանակին է, կարելի է ըսել, որ անապատի մեռելութեան կը յաջորդէ զուարթ կենդանութիւն մը։ Բայց այսքանն ալ կ'անհետանայ որքան յառաջանանք դէպի աղի լիճը՝ ուր բացարձակ ամայութիւն կը տիրէ, և ուր կը պարզուին մօխիրի ընդարձակ կոյտեր միայն։ Այսպէս ըլլալով հանգերձ, Յուդայի անապատը Սահարա մը չէ, աւազով ու խիճերով միայն ծածկուած։ Տեղ տեղ ան տափաստան մըն է, կակուզ հողի շերտերով՝ ուր երեմն Դաւիթ իրեններով ապաստանեցաւ անոր «անտառուտ» քարայրներուն մէջ։ «Եւ նստաւ Դաւիթ յանապատին ի Մասերեթ յանձուկն, և նստէր ի Երին անապատին Զիփայ ի մոռայլ լերինն ի մթին երկրին . . .» և դարձեալ « . . . և անդ էր այր մի, և եմուտ Սաւուղ հանգչել. և Դաւիթ և արք նորա նստէին ի ներքնում այրին» (Ա. Թագաւորութեանց՝ իդ. 14 և իդ. 4), «Զայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք զճանապարհն Տեառն, և ուղիղ արարէք զշաւիզս Աստուծոյ մերոյ» (Յսայի՛ թ. 3 եւ Յովիաննես Ա. 23)։ Ու արգորե Յովհաննէս կարապետ իր աշ-

քերուն առջե պարզուած կը տեսնէր Յուդայի անապատին անանցանեիլ հեղեղատները ու ամէն կողմէն բարձրացած լեռները, որոնց առջե կը փակուէր ամէն ճամբայ, բաւիդներ որոնց ապառաժներն ու դահավէժները անվերջ ըրջաններ կը պարտագրէին։ Ու բովանդակ անապատը թէ՛ Եսաւիի և թէ Յովհաննէսի համար կը ներկայացնէր դաժան հոգիներու պատկեր մը՝ ուրուն մէջէն պիտի հարթուէր Մեսիայի ճամբան։

Յուդայի անապատը ինքնին կը բաժնուի ութը առանձին մասերու, որոնց բոլորն ալ կարելի է նկատել իր անջատ անապատներ, այսպէս՝

1. — Մանն, « . . . և Դաւիթ և արք նորա էին յանապատին Մաննայ առ երեկո ընդ աշմէ Յեռեմանայ։ Եւ զնաց Սաւուղ և արք իւր խնդրել զԴաւիթ։ և ազգ արարին Դաւիթի, և էջ ի վէմն որ յանապատին Մաննայ։ և լուաւ Սաւուղ և պնդեցաւ զհետ Դաւիթի յանապատն Մաննայ» (Ա. Թագ. իդ. 24-25)։ «Եւ յարեաւ Դաւիթ և էջ յանապատն Մաննայ։ և էր այր մի ի Մանն, և հօտք իւր ի կարմելոս . . .» (անդ, ին. 2)։ Մանն կը գտնուի Հերբանի հարաւը եղող Ղըրպըթ Մաննի արևելքը։

2. — Զիփ անապատը կը գտնուի նոյնպէս թէ՛ կղ-Զիփի և Մեռեալ ծովուն միջն։

3. — Ենգապդի կը տարածուի Այն Ճիտի շրջականները, Մեռեալ ծովու արևմտեան ափին վրայ. «Եւ յարեաւ Դաւիթ անտի և նստաւ յանձուկս Գաղդայ . . . Ահաւանիկ Դաւիթ յանապատին Գաղդայ է» (անդ, իդ. 1-2)։

4. — Թեկուէ. «Եւ կանխեցին ընդ առաւօտս ելին յանապատն Թեկուայ. և յեւ լանձն իւրեանց եկաց Յովսափատ . . .» (Բ. Մեացորդաց՝ ի. 20)։ Սա կը գտնուի Բեթղեհէմի հարաւակողմը, և Ղըրպըթ Թեկուայի արևելքը։

5. — Յերիել՝ Թեկուէի անապատին եւ Մեռեալ ծովուն միջեւ։ « . . . և զտջիք զնոսա առ եղեր զետոյն անապատին Յիշրիլի» (անդ, ի. 16)։

6. — Երիբով համանուն քաղաքին շուրջ և Արագահ գաւառին մէջ, «Եւ զիստ եղեն նոցա զօրք քաղղեացւոցն, և հասին Մեղեկեայ յԱրաբովթ Երիբովայ, կալան զնա...» (Երևիա, Iթ. 5):

7. — Բերաւան՝ թերեւս ամենէն ցամաքը Յուղայի բոլոր անապատներուն մէջ, որ կը տարածուի Բեթելի հարաւ-արեւելեան սահմաններուն մէջ, և իր անոր շարունակութիւնը: «Եւ եղեն սահմանք նոցա ի հիւսիսոյ Յորդանանու, և ամբարձցին սահմանք ի հարաւոյ Երիքովի ընդ հիւսիս, և ամբարձցին ի լեռանն ընդ ծովակողմեն, և եղիցին նորա ելք Մարդարայինն Բերաւան» (Յեսու Նաւեայ՝ Ժ. 12):

8. — Գարաւոն՝ ընդարձակ տափառաններ, որոնք կը տարածուին Էլ-Ճիպի արեւելակողմը: «Եւ պնդեցան Յովաբ եւ Արեսսա զինի Սբեններեայ. և արևն եւ մուտ, և նոքա մտին մինչև ցրլուրն Ամմանայ որ է յանդիման Գայեայ, ընդ ճանապարհ անապատին Գաբաւոնի» (Բ. Թագ. Բ. 24):

9. — Ում Քալայի հարայր. — Կանխեցինք վերե յայտնելու որ Յուղայի անապատը ընդարձակ տափառան մը ըլլալուն հակառակ, իր մէջ ունէր քաղմաթիւ քարայրներ՝ որոնք վերջին տասը տարուան լնթացքին առարկայ դարձան գիտական աշխարհի քննութեանց, և որոնք երեւան հանեցին շահեկան նորութիւններ: Սբդարեւ մինչեւ այդ յայտնութիւնները, ընդհանրապէս այն կարծիքը կը տիրէր որ «նորաքարային» խսկական դարը երբեք գոյութիւն ունեցած չէր Պաղեստինի մէջ, և ոչ խսկ Եղիպտոսի կամ դրացի այլ երկիրներու մէջ: Մինչդեռ, ընդհակառակը, մետաղներու դարի սկզբանական մշակոյթներու հետքերը առատօրէն ներկայացուած կը գտնենք Յորդանանի հովիտին բովանդակ տարածութեան վրայ, անտարակոյս զանազան կերպարանքներու տակ և այլազան ծագումներով: Այսպէս Մուկարէդ Ումքալա, կամ ամրոցին քարայրը ահազին մարտկոց մը կը ձևացնէ, և որ Ուատի Բարիքունի ձախ ափի տոլոմիթեան պատը հարպէ հարաւ-արեւամուտք կ'երկարածդէ,

հեղեղին մէկ կոր զիծը կազմելու համար, և որուն մէջ փորուած քարայրը կիկլոպեան ամրոցի մը կը նմանի: Այս քարայրը (grotte) լուսաւորուած է երեք բացուածքներէ, երկուքը հիւսիսակողմը, որուն մէկը անմատչելի, և հատ մըն ալ հարաւը: Հիւսիսակողմի ամենէն լայն լուսամուտը ձուածն է, 12 մետր բարձրութեամբ: Որմափակուելու համար շատ մեծ ըլլալով, ան իր մուտք կը ծառայէ մեծ սրաճի մը, որ ուրիշ եօթը սրահներէ կը զատուի չոր քարէ և վրան գուռնիր բացուած պատերով, և որոնց բնական սիւներն ու կամարները դիւրացուցած են քարայրին ներքին շինութիւնը: Զարաւ-արեւելամուտքը, որ հորիզոնական լայն ճեղքուածքի մը ձեւը ունի, դիւրութեամբ որմափակուած էր և կից էր պղտիկ դրան մը: Խնչպէս Ուատի-Բարիկէգունի միւս քարայրներուն մեծ մասը, այնպէս ալ Ում-Բալայի քարայրին վրայ դիզուած խաւերը ըլջակայքի բնակիչներէն մասառ մաս վեցցուած ու ուտիշին մէջ նետուած են: Մետաղային գարի յատուկ քանի մը տարբեր, որոնք հողային այս մաքրագործումէն յառաջ եւ կած են, սփռուած են հովիտին զառիթափին վրայ, քարայրին լուսամուտին ստորոտը: Եւ ահա կատարուած պիղումներու ընթացքին էր որ, քարայրին այժմու պիշտի տէրը այրին մէջէն գտաւ կայծ քարէ դաշոյն մը, հին խաւի մը ընդերքէն, զոր՝ ապառաժ մը կրցած էր պաշտպանել նախապէս կատարուած պիղումներէն: Սովիկա 318 մմ. երկար ու 70 մմ. լայն ու 10 մմ. թանձր թուխ կայծ քարէ թերթ մըն է, առանց ժանգի: Քարէ այս դաշոյնին մէկ կողմը հարթ է ու գրեթէ ամբողջ երեսը ծածկուած է բնական cortexի շատ նուրբ խաւով մը: Այս միւննոյն երեսին վրայ կը տեսնուին հարթ, խորունկ ու կանոնաւոր քերթուկներ, որոնք դաշոյնին կերպով մը սղոցի ձևը տուած են: Դաշոյնին միւս երեսը, որ թեթեօրէն ուռուցիլ է, աւելի լայն քերթուկներ ունի և ամբողջութեանը մէջ այնպէս մը պատրաստուած է որ շատ դիւրութեամբ, և իր բնական գործածութեանը մէջ կրնայ միար կտրել ու պատուել: Գործաւորը իր դաշոյնին տալ ուղած է սարգենիի տերեսի մը ձեւը, և հակառակ անոր որ ամբողջական ու բնական յղկում մը

չի տեսնուիր, ան հին գարաշը անի մը պատկանելէ բաւական հեռու է: Մինչեւ հիմա Պաղեստինի մէջ կատարուած պեղումներէն նոյն ձեր գաշոյն մը երեան եւած չէր, նոյնիսկ աւելի պղտիկ չափով: Վերջերս եղիպտոսի Ռւատի էշ-Շեխեն թէկ նոյն արհեստով ուրիշ կտորներ գրտնուեցան, բայց Ռւմ-Քալայի քարայրէն գտնուած այս գաշոյնին համար կարելի չէ բաել երբեք որ ան եղիպտական ծագում ունի. ու ոչ մէկ կասկած որ եղիպտական գաշոյնները շատ հին ժամանակներու մէջ Պաղեստինէն հոն փոխադրուած են ու այս իոկ պատճառով բոլորն ալ ժանգուած, մինչդեռ Ռւմ-Քալայի կայծքարէ դանակը ժանդի ո՞չ մի հետք չի կրեր, պահուած ըլլալով քարայրին ամբարտակներուն մէջ: Ռաբէսզի կարելի ըլլար գէթ մօտաւոր ճշշտութեամբ ստուգել թէ գտնուած զործիքը ո՞ր մշակոյթի կը պատկանէր, պէտք էր որ անոր հետ ուրիշ առարկաներ ալ գտնուած ըլլային, ինչ որ չեղաւ գժրախտաբար, հակառակ 1928 ապրիլին տեղի ունեցած այն քան լուրջ պեղումներուն: Բոլոր զբանուածները պղինձի դարէն անդին չէին անցներ: Կայծքարէ նոյն այս զործիքը, գատելով իր քովէն երեան եկած քանի մը կաւէ անօթներէն, կարելի է որոշապէս ըսել որ կը պատկանի անէլլիթիկ կամ Քանանեան շրջանի ճարտարարուեստին:

Ճարունակուած պեղումները երեւան բերին զանազան շրջաններու պատկանող որոշ թիւով խեցիէ անօթներ, սկսեալ պըղինձի դարաշրջանէն մինչև արդի ժամանակներու յատուկ: Ռւմ-Քաղաքայի քարայրէն հանուած կաւանօթներու հետ բաղդատութեան տեսակէտով, շահեկան պիտի ըլլար ակնարկ մը նետել անոնց հնագոյններուն վրայ: Բոլորն ալ կը պատկանին պղինձի առաջին դարուն. ձեռքով կաղապարուած են եւ առանց զուրգի (tour): Գտնուած խեցեղէն անօթներն են կարասի (jarre) տափակ յատակ մը, ինչպէս նաև միւսուն կարասին երկուքը հորիզոնական և մէկն ալ ուղղաձիր ծակ ու եռանիսա ակնջիկներ, երեքն ալ Ռւմ-Քաղաքայէն գտնուած նոյն տեսակի ակնջիկներէն աւելի ամուր, հաւանաբար ուրիշ կարասի մը կանթին (anse) մէկ կտորը ու նոյն տիպարի կաւանօթի մը ներսի շրթունքէն վեց կը-

տորներ են: Որքան որ գտնուած այս բեկորները բաւական չըլլան անոնց հնութեան շրջանը որոշապէս ճշգելու, այսուհանդերձ սա ճշմարիտ է որ անոնք կաւագործութեան (céramique) շատ աւելի հնագոյն շրջանի մը կը պատկանին քան Ռւմ-Քաղաքայի հնագարեան խաւին պատկանող կաւանօթները:

Գ. — Ռւմ-Քաղաքայի բարայր. — Առաջին երեսոյթը զոր Ռւմ-Քաղաքայի պեղումները ի յայտ բերին, այն համախռնեալ քաղաքակրթութիւնն է, որ ինքնին բաւական յառաջացեալ ճարտարարուեստ մը ունենալով հանդերձ, մասնաւորաբար կաւագործութիւնը, իր գործիքներուն մեծագոյն մասին համար կը շարունակէր կայծքարը գործածել: Նոյն այդ քաղաքակրթութիւնը բաւական երկար տևողութեան մը համար կինայ զուգազիպէլ պղինձի դարուն հետո: Մետաղային կեղրոններէ հեռու և աղքատ շրջաններու մէջ, ինչպէս է Պաղեստինի լինուային մասը, պղինձէ զործիքները շատ դանգաղ թափանցեցին և բաւական ժամանակ անցաւ մինչև որ հին զործիքներուն յաջորդեցին: Այսպէս մանգազն ու նիղակի սլաքը, զոր օրինակ, շարունակեցին զործածել մինչև երկաթի դարը:

Թէւ աղքատ ու համար, Քաղաքայի աշխատուած կայծքարերը աւելի բազմազան են քան քանանեան նախկին քաղաքներէն գուրս հանուած կայծքարէ զործիքները: Անոնք կը պատկանին ուրեմն պըղինձով նուազ հարուստ կանխագոյն շրջանի մը: Միւս կողմէ սակայն երեան հանուած կաւանօթները թուլ չեն տար աւելի ետ երթալու եւ շատ հեռունները երթալ այն ժամանակներէն երբ մետաղազործական ճարտարարուեստը արդէն իր ազգեցութիւնը գործած էր մարդկային զործունէութեան վրայ: Քաղաքայի հնագարեան ըլլակիչները, առանց ունեցած ըլլալու անազապինձէ զործիքները, կ'օգտուէին աւելի բախտաւոր երկիրներու մէջ կատարուած կարգ մը յառաջգիմութիւններէն: Այս մասին սակայն ցարդ երեան բերուած հետքերը շատ գէշ վիճակի մէջ մէզի հաւսած են: Ասոնցմէ քիչեր անվթար մնացած են, հազիւ քանի մը բեկոր միայն: Ասով մէկտեղ գտնուած այս բեկորներն են որ

փոքր լոյս մը պիտի սփռեն անսնց քաղաքակրթութեան շուրջ։ Հնաքարային խաւը մասնաւորաբար երեք խորչերէ կազմուած է, տրուած ըլլալով՝ որ միջանկեալ միջոցը շատ աղքատ է։ Ըսել չէ թէ քարայրը իր ամբողջ տարածութեան մէջ չէր լեցուած, այլ վերջէն մաքրագործուած երեսին հետքերը անհետացած ըլլալու հն։ Քարայրին առաջին խորչէն, պատին երկայնքն ի վեր, երեան եկան կրային անօթի մը բեկորները, գրեթէ անվթար մնացած երկաթաքարէ անօթ մը, նկարազարդ կարասի մը վիզը (col), յլկուած կայծքարէ մկրտար մը, կայծքարէ հովահարի ձեռվ քերոց (racloir) մը, ու այս բոլորը չորս մեթր երկար, մէկ մեթր լայն և 0,75 մեթր խորունկ տարածութեամբ խորչի մը մէջ։ Երկրորդ խորչը կը գտնուէր ոչ շատ հեռու հիւսիս-արևելեան անկիւնէն և չորս կողմէն մեկուուցած ու առաջին խորչին գրեթէ կէս մեծութեամբ։ Հոսկէ գտնուած հնագոյն առարկաներն են կրաքարէ շինուած գինդ մը, կայծքարէ պղտիկ գանակ մը, և կայծքարէ նետի մը ծայրը, չաւարտած լախտ մը, երկաթաքարէ երկու անօթներ, իրարու մէջ դրուած վիճակով։ Երրորդ ծերպը որ քարայրին մուտքին վրայ բացուածն էր, ամենէն կարեորն էր և ամենէն ճոխը, հնագիտական առարկաներու տեսակտով, 6,5 մեթր երկար, 5,5 մեթր լայն և 2,20 մեթր խոր տարածութեամբ։ Փորուած էր քարէ դարու առաջին շրջաններուն։ Տեղւոյն վրայ գտնուած բաւական թիւով քարեր ցոյց կուտան որ քարայրը ներսէն նախապէս պատով հիւսուած էր ու կը ներկայացնէր ձորին վրայ բացուած տեսակ մը հիւղակ։ Այս երրորդ ծերպէն գլունուած առարկաներն են մէկը միւսին մէջ դրուած երկաթաքարէ երկու անօթներ, ինչպէս նաև դարձեալ պաղաւլգէ անօթներու այլ բեկորներ, խոշոր երկանաքար մը, ուկորէ երկու հերիններ, կայծքարէ մանրողներ և այլ առարկաներ, վայրագօրէն ջախջախուած երեք կմալսւքներ, անազաւղինձէ մատանի մը, բազմաթիւ խեցելէն բեկորներ որոնց մասին պիտի խօսինք իրենց կարգին։

Յաջորդական պեղաւմները Քաղաքայի քարայրէն երեան բերին կայծքարէ շինուած վաթսունի չափ առարկաներ, որոնցմէ

35ը գասաւորելի և 12 հատն ալ իրը հաշտիչ։ Այս ճոխ հաւաքման մաս կը կազմին սկ կայծքարէ նետի մը ծայրը, գանակի կամ սղոցի ձեռվ պղտիկ շեղըներ, սուրբերանով գանակի կտոր մը, պղտիկ ոլաք մը գայլիկաններ, քերթիչներ, մկրտներ, և վերջապէս ոսկորէ ասեղներ և զանազան խիփորներ։

Ասոնցմէ զուրս Քաղաքայի պեղումները յաջորդաբար երեան բերին կրաքարէ և պաղաւլգէ այլ առարկաններ։ Ուստի Քարբէզուն հարուստ ըլլալով կրաքարով, Քաղաքայի ցեղախումբը մեծապէս օգտագուցաւ անոր քարահանքերէն, ու զայն գործածեց իր տնտիկան առարկանները շինելու, վասնզի մէկ կողմէ գիւրաւ կոփելի քար մը ըլլալով հանդերձ, բաւական ալ գիմացկուն էր։ Այսպէս շինուեցան զանազան անօթներ, և ջաղացքի երկանաքարներ։ Քիչ յետոյ անոնք կրաքարին տեղ գտան շատ աւելի զիմացկուն նիւթ մը, երկաթաքարը (basalte) որ շատ առատ էր Անդր-Յորդանանի և Գալիլիոյ մէջ, որմէ սկսան պատրաստել առաւելապէս իրենց տաշուած ու քանդակուած գէնքերը։ Այս երկու տեսակի քարերու խառնուրդով շինուած գործիքներ բաւական շատ են Պաղեստինի բոլոր հին վայրերուն մէջ։ Քաղաքայի աւերակներէն գտնուած առարկաններուն կամ բեկորներուն մէջ ուշագրութեան արժանի են պերճանքի առարկաններ, զէնքեր, երկանաքարեր, տաշտիկներ, չորսը անվթար երկուքը կոտրած անօթներ, եռոտանիի մը մասերը։ Ասոնցմէ զուրս քարայրին մուտքի խորչը երեան բերաւ երկու հարիւրէ աւելի կաւէ անօթներու բեկորներ, մեծագոյն մասամբ կարասներ և սեղանի մանր սպասներ։ Կարասներուն ըրեթէ բոլորը ոչ ականջիկ ունէին և ոչ ալ կանթ, թէև բոլորն ալ զիմացկուն բրտեղէններ։

Քաղաքայի ամբողջ կաւանօթները ձեռքով շինուած են, ինչպէս անազաւղինձի առաջին գարաշընանի կաւագործութիւնը։ Խմորը ընդհանրապէս գէշ շաղուուած է, ուր կը տեսնուին կիրի ճերմակ փոքրիկ բեկորներ ու կայծքարի կտորուանքներ։ Բոլոր այս մանրու քնները սուր անկիւններ ունենալով, կը թուի որ անոնք հեղեղի հունէն հանուած չէն, այլ մանրուած քա-

րեր են: Փուռի մէջ լաւ եփուած են եւ կարմրագոյն միատեսակ գունաւորութիւն մը ունին: Կաւագործութեան արհեստէն գիտելով, կարելի է ըսել որ նիւթը ջուրին նուազ թափանցկուտ է և նուազ թանձր: Իւրաքանչիւր կաւանօթի վրայ կը տեսնուին նախնական արհեստի մը հետքերը միայն. յայտնի է որ բրուաը իր ձեռքերուն օգնութեամբ գործած է: Արհեստաւորը գործիքի դիմած է այն պահուն միայն երբ վերջին անգամ ուղած է յզկել անօթը, զայն փուռը նետելէ առաջ: Նկատնի է նոյնպէս որ բոլոր կաւանօթներուն ականջիկները վերջէն չէ որ փակցուած են, այլ ամբողջութեան հետ գրուած, և ուղղագիր ականջիկը Քաղաքայի կաւագործութեան ամենէն յատկանչական դրոշմներէն մէկն է: Աեղանի անօթներուն կարելոր մէկ մասը այնպէս մը հասած է մեզի, կարծէք նոր ելած ըլլար բրուտի փուռէն, առանց ունէ զարդագիծի: Իրը զարդ եղածներն ալ շատ մանկական են, թէ ոչ բուրովին անարժէք, ըլլալով կաւագործական արհեստին նախագիրը: Գոյներու մէջ աչքի կը զարնեն միայն ուն ու կարմիրը, ոչ միայն անօթին գուրսի երեսին վրայ, այլ և ներսը կաւագործ ջանազիր է հետապնդելու գեղեցկագիտական նրապատակ մը: Հետաքրքրական պարագայ մը ևս սա՝ որ Քաղաքայի գրեթէ բոլոր կաւանօթներուն վրայ տեսնուած ծակերը եփուելէն վերջն է որ բացուած են, կայծքարէ ծակիչով մը: Անկասկած որ այս ծակերը կը ծոռայէին անօթները քարայլին պատէն կախելու կամ ճամբորգութեան ատեն վրանին կապելու, ինչպէս որ մինչեւ ցայսօր կը տեսնենք անապատի վաչկատուններուն մէջ, ուղտերու քամակէն վարկախուած:

Քաղաքայի վերին խաւէն գուրս հանուած անօթները իրենց պատմական ցանկին մէջ անցունելու համար, կը բաւէ զանոնք բաղդատել Պաղեստինի հնագոյն քաղաքներու կարաւաններուն հետո Երիքով, Ճէզէր, և Մէճիտոս այն միակ քաղաքներն են՝ որոնք մասամբ միայն հետազոտուեցան մինչև հասնիլը անոնց հողի բընական խաւին: Խորաչափութեանց և խրամներու շնորհիւ կատարուած հետազոտութիւնները տակաւին հեռու են արուեստա-

կան այս թլրակներուն մէջ պահուած հնասխոսական գանձերը սպառած նկատուելէ, ու մասնաւորաբար հողի վարին խաւերուն մէջ տակաւին շատ գործ կայ ընելիք: Մնաց որ գժուար է զանազանէլ թէ ցարդ երևան հանուած առարկաները Քաղաքայի հիմնարկութեան սկիզբներուն կը պատկանին թէ յաջորդ գարերուն: Նման զանազանութիւն մը հնարաւոր պիտի դառնար հողի խաւերու ամբողջական քննութեամբ մը: Բերդաքաղաքի մը մէջ, ինչպիսին էր հինն Քաղաքան, անշուշտ որ նստակիեաց կեանքը մինչ այդ արագ ու խոր փոփոխութիւններ յառաջ պիտի բերէր թափառաշրջիկ ցեղերու սովորութեանց մէջ: Այն ձեռվ որ մեզի ծանօթ է, արուեստական այս բլուրներէն կամ թէկներէն երեան հանուած ամենահին գործիքները Քաղաքային գտնուած գործիքներէն կը զանազանուին: Անշուշտ երկու հաւաքմանց մէջ ալ հասարակ տարրեր կան, ըլլայ կայծքարէ բանուած հովանարի ձեռվ քերթոցներու, ըլլայ ուղղահայեաց ծակ ականջիկներով բրուտեղէններու միջև: Բնական է որ նման տարբերութիւններ գոյութիւն ունենային երբ մէկ կողմէ Քաղաքային կը պակսին երկնկեկ զուգահեռ երկբերան գանակները ու փոսածե մեծ ականջիկները. անոնք առատ են սակայն Երիքովի և Ճէզէրի մէջ: Կայծքարէ գործիքներու պէսպիսութիւնը, հերիւններու յարաբերաբար մեծ թիւը եւ կաւագործութեան մէջ ուղղածից ու ծակուած պգտիկ ականջիկները ու երբեմ կոճակէ մը աւելի մեծ չեղող հորիզոնական պգտիկ անօթները, այս բոլորը մեզի կը տանին Քաղաքայի համար նուազ յառաջացած ու նուազ զարգացած ճարտարարուեստի մը քան Երիքովի ու Ճէզէրի բարգաւաճ մեծագոյն շրջանին, բայց որ կը նան ժամանակակից ըլլալ իրենց ծագման ճարտարաբուեստին: Նոյն բանը կարելի է ըսել Անդր-Յորդանանի Թէլ-Ել-Մուշթագ կոչուած տեղույ մասին, Վատի Նիմրինի մէջ, Վատի Շայիալի և Վատի Էտ-Ճէրեահի գետախառնութիւն վրայ, քաղաք մը որ տակաւին պեղուած չէ, բայց որ ըստ կարդ մը հնութիւններու, կը պատկանի ամենահին Երիքովի գարուն: Պղինձի առաջին գարուն կը պատկանին նոյնպէս Մեռեալ ծակաւին հայութիւնը, և թէրակղղիէն ոչ շատ

հեռու գտնուող Ասհել Էտ-Տրատայի աւերտենէրը : Ասոր ալ քարէ գործիքները կը քաղական ատամնաւոր կամ պարզ քերնով դանակէ մը և հերիւնէ մը . իսկ կաւագործութեան մէջ կը վիտան խորշաւոր ականչիները Յայտնի է որ այս բեկորները աւելի կանուխ ժամանակի մը կը պատկանին, Երիքովի հիմնադրութենէն չատ առաջ: Վերին Քաղաքայի ամենէն չատ մօտեցող աւերտենէրը Յորդանանի հովիտին արեւելան բաժնին մէջ գտնուող թէլէլադկասուի աւերտենէրն են, որոնք կը ծածկն 600 մետր երկար ու շուրջ 350 մետր տորածութեամբ հին քաղաքը, երկուանհեակ մը րլթակներով, ուր կատարուած պեղութեներով երեան եկան կայծքարէ ամէն տեսակ առարկաներ, ինչպէս միակտոր կամ ատամնածեւ բերանով շեղքեր, հերիւններ, ոլաքներ, հովահարի ձեռով զեղեցիկ բազմաթիւ քերթոցներ ու մեծ թիւով մկրատներ: Գտնուած կաւանօթները բոլորվին վշրուած էին, բայց որ նոյն էին Քաղաքայի կաւանօթներուն: Յայտնի է որ երկուքին համար միենոյն քաղաքակրթութեան ըրջանն է և նոյն այս քաղաքակրթութեան յատուկ քանի մը առարկաներ ալ գտնուեցան հատեալ երեք քարայրներուն մէջ. Վասի Յահանի, վերին Գալիլոյ մէջ, Մալհարադ Էլ-Վաս՝ Կարմեղոսի մէջ և Մակարադ Էլ-Թավալիին: Յուղայի մէջ: Ասոնցմէ առաջին քարայրը պեղուեցաւ 1924ին ու երեան եկան հնագոյն բնակչութեան մը հետքերը, խեցեղէններ և կայծքարէ գործիքներ, բոլորն ալ հողի երեսէն 2 մ. 20 ներսօք: Աւելի գէպի խորը, հողը ստերջ էր: Կաւէ անօթները կը բաղկանային սեղանի պղտիկ ամաններէ և մեծ կարասներէ, բոլորն ալ կտոր կտոր եղած: Կարասները ուղղաձիգ ականջներ ունին, քոլմտի բացուած ծակերով և զարդարուն, Քաղաքայի արհեստին իսկական ոճովը: Կայծքարէ գործիքները նուազ յատկանշական են, կողմանի քերցներ, նուրբ սըլաքներ, գանակի շեղքեր և նոր յղկուիլ սկսած կացլներ:

Երկրորդ քարայրը կը բացուի Յուղայի վերջին հանդիպակագոտիին վրայի պղտիկ մէկ ձորին մէջ, ծէյր Ապանի ծօտ, զոր տեղացիք կ'անուանեն Մակարադ Էլ-Թավամին, օտարականներէն կոչուած «Աղաւ-

նիներուն քարայրը»: Քարայրին խորէն աղբեւը մը կը հոսի որուն մզուած ջուրերէն կազմուած են շթաքարերու և պտկաքարերու կրային մածուածներ, որոնք տեղ տեղ իրարու միանալով կայժմած են խոշոր սիւներ: 1929ի գտնան, Պր. Նէօվիլ երկու անգամ գետինը խորունկ մը չափեց, մէկը կեզրոնէն իսկ միւսը հարաւէն: Գրտնուած կաւանօթներէն յայտնի եղաւ որ այս քարայրը գոյութիւն ունիցած է պատմական բուրր ըրջանին կերպոնական խոռոչը մինչև ապառաժները կը պատկանին անագապղինձի առաջին գարուն: Հօն ուր հասան, մինչեւ մեծդղի ապառաժները, անկասկած որ քարայրին թէրես սկզբնական յատակը չէր, բայց աւելի խորը իջնելու համար պէտք պիտի ըլլար ծանր աշխատանքի, ժայռային խաւէն անդին անցնելու համար:

Կերպոնական վարի խաւէն գտնուած առարկաները կը բաղկանային կայծքարէ զանազան գործիքներէ, ինչպէս կողմանի բերանով պղտիկ կացին մը, պղտիկ գանակ մը, մանգաղի մը կտորները, նետի մը երկու ծայրերը, հերիւններ, երկբերան դանակներ, ոսկորէ գործիքներ, ոլաք մը, ասեղ մը, սանտրի ակուայ մը ևն: Իսկ կաւանօթներուն մէջ աչքի կը զարնէին աւելի զանազան ձեփ ականջիկներ և կանթեր, ծակով և առանց ծակի, շատերուն վրայ մատի հետքերով և յաճախ փոքրիկ զարդերով: Դիտելի է որ նոյն այս երկրորդ խեղճուկ քարայրէն ճոխ և զեղեցիկ կաւագործութեան մը այնպիսի բեկորներ եւ կան զորս հազիւ թէ նոյն գարու պատկանող աւելի մեծ քաղաքներէն աւելի ըլլար գտնել: Ինչպէս որ կը տեսնուի, վարին խաւէն գտնուած այս զանազան առարկաները շատ կը պատշաճին Քաղաքայէն հանուածներուն: Բայց կան քանի մը առարկաներ, որոնց համար կարելի է որոշապէս ըսել որ պղինձի գարը կանխող ժամանակի մը կը պատկանին, քանանեան քելերու վարի խաւէրը յատկանշող զարուն:

Հնդհակառակը, վերին Քաղաքայի քաղաքակրթութեան հետքերը կը վերագտնին երուսաղէմէն 11 քլմ. գէպի հարաւ թէֆէր Դասի մէջ, փոքրիկ կայան մը՝ զոր Նէօվիլ գտաւ 1927ին, ինչպէս նաև Ան Սալէէի

ու վաստի կհազզի ափերուն վրայ, թէ ժարաայէն ոչ շատ հեռու, նոյն տեսակի յդկուուծ մկրատներ գտնուեցան նաև Սեպաստիյէ (Սամարիա) և Արդաս զիւղերուն մօս:

Վերին Քաղաքացին հնախօսական առարկաները ուրեմն առանձին գասակարգ մը չեն կազմեր. անոնք կը մտնեն այնպիսի ցանկի մը մէջ որ երթալով կ'ընդլայնի եւ կը բնորոշուի: Համեստ, նախնական, չուրջ քառասուն գարու մոռացումէ մը յետոյ, ան գուրս կուգայ խեղճուկ հովիտի մը աղջափատիկ մէկ քարայրէն, ու կը ներկայանայ իրը մէկ նորագոյն վկան մինչև հիմայ շատ քիչ ճանչցուած Պաղեստինի քաղաքակըրթութեան, որ գարգացման շրջանն է Ն. Ք. երկրորդ հազարամեակին: Սփելայի եւ Յորդանանի հովիտներուն քանի մը զաշտերը այս հեռաւոր քաղաքակրթութեան աւելի հարուստ ու փայլուն մնացորդները տուած են: Ինչ որ տուաւ սակայն Քաղաքա, իր ծոցէն ելած հնագիտական բեկորներով, շատ աւելի արժէքաւոր են, վասնզի ցարդ նոյն լեռնային շրջաններուն մէջ գտնուածներէն ամենէն կարեորներն են: Ու երբ սկսուած հետազօտութիւնները միևնոյն եռանգով շարունակուին, անկասկած որ Պաղեստինի հնագոյն քաղաքակըրթութիւնը նոր յայտնութիւններ<sup>(\*)</sup> երևան պիտի բերէ:

Հայեալ

ԱՐՏՈՒՐ ԱՐԲԵՏԻՍԿՈՂՈՅ

(\*) R. Neuville & A. Mallon: Les débuts de l'âge des métaux. SYRIA, 1931, էջ 24-47.



## ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

### ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

(Շարունակուած նախորդ թիւն)

Ամէն մի ձայնական օրէնք ունի իր գործունէութեան ժամանակը. հնդեւրոպական նախակեզուի նախաձայն պ գառնում էր հայերէնի մէջ ն. ինչ. պըտեր — հայր, բայց այդ օրէնքը պատկանում է հայերէնի հնագոյն շրջանին և Բ. Գ. Դ. գարերում, երբ հայերը փոխ են առնում պարսկերէն, ասորերէն, լատիներէն և յունարէն բառեր, նրանց պ ձայնը չի գառնում այլեւ ն, այլ մուռմ է պ. օր. պէտ. պատկար — հյ. պատկեր, յն. պատրիարքոս — հյ. պատրիարք և այլն: Էստ այսմ եթէ պարսկերէն և արաբերէն բառերը Ագուլիսի բարբառում ենթակայ են եղած ձայնափոխութեան օրէնքներին, իսկ թուրքերէն և ոռուսերէն բառերը ոչ, նշանակում է թէ ձայնափոխութեան օրէնքներին, էլի թուրքերէն է զործել և իր ազգեցութիւնը վերջացրել է այն ժամանակ, երբ պարսիկներն ու արաբները Հայաստանումն էին, և իրենց բառերը փոխ առնուած էին հայերէնի մէջ, սակայն դեռ թուրքերն ու ոռուսները մտած չէին Հայաստան: Արաբների առաջին արշաւանքը եղաւ 640 թուին, բայց հազիր 700 թուին տիրեցին երկրին: Առնուազն մի դար էլ պէտք է զնել մինչև արաբերէն լեզուն այնպէս կ'ազգէր հայերէնի վրայ, որ շատ բառեր կը մտնէն նրա մէջ: Թուրքերը առաջին անգամ Հայաստան մտան 1021 թուին և եթէ զնենք նոյնպէս մի դար, մինչև թուրքերէն բառերը կը մտնէն հայերէնի մէջ, կը հետեւ որ ձայնաբանական օրէնքների ծագումը, հետեւաբար և զօկերէնի ծագումը ընկնում է Թ.-ՓԲ. գարերում:

Այս սահմանը կարելի է աւելի սեղմել. կայ մի բառ, որ աւելի որոշ բան կարող է ասել մեզ. զա պատրիարքուն բառն է: Այս բոյսը հնդկական ծագում ունի. արաբները մտցրին այն Հայաստան, և նիւթի հետ նրա արաբերէն անունը անցնելով հայերէնի, ենթարկուել է առ ձայնափոխութեան զօկերէնի մէջ: Եթէ բուսաբանութեան պատմութեամբ կարողանանք որոշել թէ ե'րբ

նոյն բոյսը մտաւ և տարածուեց Հայաստանի մէջ, կ'օրոշուի նաև զօկերէնի ծագումը:

Բոտ իս պէտք է կարծել ԺԲ. դարում. բառը արդէն գործածել է Միսիթար Հերացին՝ 1184 թուին:

Ունինք դարձեալ արօսի, չօհի (պլս. արբասի, շահի) պարսկական գրամմերի անունները, որոնց մէջ նոյնպէս ա-օ. բայց սրանց ա-օ ձայնափոխութեան պատճառը յայտնի չէ, ինչպէս և յայտնի չէ այդ բառերի ծագման ժամանակը, որ պարսկական գրամագիտութեան գործն է:

Կայ նաև մի ուրիշ նկատելի կէտ: Վերի ցուցակում գտնուում են այնպիսի բառեր, որոնք պարսկերէն կամ արաբերէն ծագում ունին, բայց չեն ենթարկուած ձայնափոխութեան օրէնքին: Այդ բառերը թուրքերի միջոցով մտած են մեր լեզուի մէջ, և իր այն՝ համարում են թուրքերէն և հետեւաբար չեն ենթարկուած ձայնափոխութեան:

Մեր եղբակացութիւնը կարելի է հիմնաւորել կամ հաստատել նաև ուրիշ միջոցներով. օրինակ ֆանդ բառը պարսկերէն է, ուստի զօկերէն պէտք էր տար Փունդ, բայց քանի որ ֆանդ ձեռվ է, ուստի մտած է թուրքերէնի միջոցով. և որովհետեւ Ֆ ձայնը ունի և ոչ վի (հմմտ, արաբ, ֆալ — Աղլ. փոյլ), ուստի 1270 թուերից է: «Դըրամի մանրուք» բառը ունինք երկու ձեռվ՝ խրտոկ և խուռդա. առաջինը հին պարսկերէնից է, որին ապացոյց են կ և ս ձայնելը, ըստ որում և ա դարձած է օ. երկրորդը նոր ձեռ է, անշուշտ թուրքերէնից. — սահմար բառը թէկ արաբական ծագում ունի, բայց անշուշտ թուրքերէնից անցած է մեկ. որովհետեւ արաբերէն ձեռվ պիտի տար սաօթ. թուրքերէն լինելու մի ուրիշ ապացոյց է՝ ներմուծուած ի ձայնը: Ժամացոյցը հընարուած է 1370 թուին, ուստի բնականաբար ձայնափոխութիւնը նրանից առաջ է:

Բարբառների ծագման ժամանակը ուրշելու համար Աղուլիսի բարբառի նման և աւելի ցայտուն ձայնաբանական մի երեսով է ներկայացնում Ղարաբաղի բարբառը: Այսուել, ինչպէս տեսանք քիչ վերև, թ, գ, զ, ձ, ջ ձայները վերածում են պ, կ, տ, ծ, ճ. բայց այս օրէնքին ենթարկւում են միայն հայերէն բառերը, նրանց մէջ առնելով նաև ասորերէնից, յունարէնից և պարսկերէնից առնուած փոխառու-

թիւնները (հին փոխառութիւններ). հմմտ, ջուխտ — ճօխտ, բրինձ — պրինձ, գարման — տէրման, դազար — կէզար ևայլն. իսկ թուրքերէնից փոխառեալ բառերը մնում են անփոփոխ. ինչ. բայց «իշխան», բէզ «գէօնըմ» «անդամ», բոլ «բաւական», քյասիր «աղքատ», գէօշակ «անկողին»: Զայնափոխութեան այս զանազանութիւնը ցոյց է տաւիս որ օրէնքը գործել է թուրքերի Հայաստան գալուց առաջ, և հետեւաբար բարբառի ծագումը դարձեալ ընկնում է ԺԲ. դարում:

Տարակոյս չկայ որ այն թուականը (ԺԲ., դար), որ դրինք այստեղ հայերէն բարբառների ծագման համմար, առաջին և վերջին եղբը չէ: Կամ բարբառներ կամ աւելի ճիշտ՝ բարբառային երեսոյթներ, որոնք էլ աւելի ուշ են առաջացած, ինչպէս որ կան երեսոյթներ, որոնք գեր նոր միայն սկսել են ձեւանալ և կամ ապագային պիտի ձեւանան: Սյապէս՝ հակառակ իր խիստ այլափոխուած ձեխն, բաւական ուշ ձեւացած մի երեսոյթ է Սւեզիոյ բարբառում ա-ու ձայնափոխութիւնը, որովհետեւ նրան են ենթարկուում նոյն իսկ թուրքերէն բառերի մի մասը. ինչ.

թուրուուկ «կոկորդ»	—	թրք. բողազ
բայրուուկ «զրօշակ»	—	բայրազ
բուջուուկ «անկին»	—	բուջազ
զառթուուկ «արծիւ»	—	զարթաւ
դալօղ «փայծաղ»	—	դալաղ
զանթուուր «կենդինար»	—	զանթար
չանուուկ «ամման»	—	չանաղ
չանթօ «պայտուսակ»	—	չանթա
զագրուն «ձիւթ»	—	զաթրան
թանաք «թիթեղ»	—	թէնէքէ
դամուր «երակ»	—	դամար

Նոյն օրէնքին չեն ենթարկուում սակայն ուրիշ թուրքերէն բառեր. ինչ. զունդակազ «խանձարուր», հրացանի կոթ», էսմէր «թուխ», Ջիղար «թուք», սէքսան «ութուն», գուխսան «իննոսուն», իլան «եւ», չօրաբ «գուլպա», ղալա «բերդ» զընզըրդաղ «ըրոժու», լուղաթ «բառ», զիւշազ «անկողին» ևայլն: Զայնափոխութեան մէջ այս խտրութիւնը ցոյց է տալիս որ երեսոյթը տեղի է ունեցել թուրքերի գալուց յետոյ, բայց ոչ շատ յետոյ: Դրա համար էլ հնագոյն թուրքերէն փոխառութիւնները հըպատակուել են օրէնքին, բայց նորերը՝ ոչ,

որովհետեւ այդ ժամանակ արգէն օրէնքը դադարել էր զործելուց։ Հրացանի զիւտը (1346 թիւ) հաստատում է մեր ասածը։

Մւեղիոյ բարբառից էլ աւելի ուշ ձեւացած մի երեսյթ է ա ձայնաւորի օ-ի վերածումը ոնդականից տառչ՝ Համշէնի բարբառում։ Արան իբրև ապացոյց ծառայումէ այն հանգամանքը, որ հայերէն բառերի հետ՝ նաև բոլոր թուրքերէն բառերը ենթարկուել են նոյն ձայնափոխութեան։ ինչ .

Տօնդալ «փակաղակ» — թրք. մանդալ կազօնմիշ էլա «չահեցայ» — » կազանմը և սալլօնմիշ էլա «չարժուեցայ» — թրք. սալօնէդէ «իսկոյն» — թրք. անիդէ լանմը խօս «իջնան» — թրք. խան մէնդալ «կրակարան» — թրք. մանդալ լիաթ կօնահաթ «բաւականանալ» — թրք. կանազօնթար «կենդինար» — թրք. դանթար կօնջա «կարթ» — թրք. դանջա լորբըշ կօնդըրմիշ անել «համողել» — թրք. կանմօնթար «այտոյց» — թրք. մանթար չօնախ «աման» — թրք. չանախ չօնթա «պայուսակ» — թրք. չանթա

Եթէ Զօկերէնը և Դարաբաղի բարբառը իրենց այնքան բնորոշ առանձնայտկութիւններով հանգերձ դառնում են ԺԷ. դարի արդիւնք, նմանապէս Մւեղիոյ եւ Համշէնի բարբառները՝ աւելի ուշ ժամանակի արդիւնք, հապա ինչ պիտի լինին միւս բարբառները, որոնք արգէն մի մեծ տարբերութիւն չեն ներկայացնում զրաբրից։ Այսպէսով վերջին անգամ հաստատում է այն միտքը, թէ Ե. գարում կամ նրանից առաջ էլ, Հայաստանում խօսուում էր մի հայերէն, որի ներկայացիւն էր զրաբարը։ Բարբառների այնպիսի սուր տարբերութիւն, ինչպէս նըկատում ենք այժմ մեր մէջ, չկային. եղածները մանր բաներ էին։ Հետեւաբար զուր է որմանց այն ենթազրութիւնը թէ հին հայերէն եւ զրաբար իրաբրից տարբեր բաներ են կամ թէ զրաբարը հին հայերէնի զանազան բարբառներից մէկն է միայն։

Այս կարծիքը ունէր նաև իմ ուսուցիչ հանգուցեալ հայագէտ Հիւրշման, եւ նոյն կարծիքին է դարձեալ հայագէտ Մէյյէ։

Վերջացնելու համար այս զլուխը և իր լրացում ԺԷ. գլխի, քննենք այստեղ թէ ի՞նչ էին այն տարբերութիւնները, որ

ներկայացնում էին Ե. գարում հայերէն բարբառները իրաբրից։

Այս տարբերութիւնները կարող ենք բաժանել երեք կարգի։

ա) Արտասանական տարբերութիւններ։ — յունաբան գպրոցի բառակերտութեանց մէջ կան մի քանի բառեր, որոնք սովորական հայերէնից տարբեր հնչում են ներկայացնում։ այսպէս ապաթարց վիս. ապաթարձ (յետոյ գարձած), ենթ վիս. լոնդ (տակը), փաղ վիս. բաղ (կից), թերես նաև ներբող վիս. ներ-փող-ողեան (ինչպէս սոտուգաբանաւում է նոյն բառի յունաբէնը)։ Այս սակաւաթիւ օրինակները ցոյց են տալիս որ այն ժամանակ հիւսիսային արեմտեան Հայաստանի ժողովուրդի մէջ կար թրթուունները թաւ արտասանելու երեսյթը, ճիշտ ինչպէս այժմ գտնում ենք Ծիգրանակերտի, Մալաթիոյ, Օրբուի և Ռոտոսթոյի բարբառներում և Պոլսոյ գրական լեզուի մէջ. բ, գ, դ, չ, ջ հնչուում են փ, ք, թ, ց, չ։

բ) Բառեր, որոնք գրաբարի ձեւով տարբեր են և ներկայացնում են աւելի հին վիճակ։ Այսպէս են օրինակ նապասակ և պատուհան բառերը, առաջինը ունէր հնապէս նապահատակ ձեւը, ինչպէս, ցոյց է տալիս գաւառական լապուստրակ, լապստրակ, լապզտրակ, լապստրակ, լապստրակ, լապաստրակ, լապահան, պտորհան ձեւերը (մանրամասն տես Արմատական Բառարան յիշեալ բառերը)։ Բայց մի աւելի խոչը հնութեան օրինակ է Ագուլիսի բարբառով կախց պկաթն բառը։ Արա հնիս. ձեւն էր գալակտ, որի հնագոյն ժառանգործներն են յն գալա, սեռ. գալակտոս, լտ. լակ, սեռ. լակտիս. առաջին ձեւից յառաջ է եկել նախ յն. գալակտ որ պահուած է միայն սեռականում, բայց ուղղականում վերջածայնի անկումով եղել է գալակ-գալա։ Նոյնպիսի անկումով և առաջին ձայնաւորի կորուսով ձեւացել է լտ. գլակտ-լակտ-լակ։ Հայերէնի մէջ նոյն հնիս. գալակտ նման սղումներով տւել է նախ գալտ-կաղթ, որ աւելի կրծատուելով գարձաւ կաթն։ Ագուլիսի կախց ձեւը, որ ծագում է կաղց-կաղթ ձեւից, պահում է

ուրեմն ոչ միայն հնագոյն հայերէնի դայնը, այլ և աւելի ամբողջական է քան յուն. գալա և լա. լակ. ուստի ոչ միայն աւելի հին է քան հայերէնը, այլ և աւելի հին ձև ունի քան յունարէնն ու լատիներէնը:

զ) Ամբողջական բառեր, որոնք գոյութիւն ունեին այս կամ այն բարբառում, բայց չկային արարատեան բարբառում կամ դրաբարում: Սրանք էլ կարող ենք բաժանել երեք կարգի: 1. բառեր, որոնք ժառանգութիւն էին մնացած Հայաստանի հողի վրայ բնակող և յետոյ հայոց մէջ ծուլուած զանազան մանր մունք ազգերից, գործածում էին տեղական նեղ շրջանակներում և որոնք գտնում ենք այսօր էլ ցրուած մեր զանազան բարբառներում: Այսպիսի բառերի թիւը բաւական մեծ է: 2. Բառեր, որոնք փոխառեալ էին սահմակից լեզուներից և գործածում էին ծայրամասերում, բայց գեռ չէին թափանցած մինչև կենտրոնական վայրերը: Մի քանի այսպիսի բառեր մենք տեսանք զլուխ ԺԷ՝ Կորիւնի լեզուի մասին խօսելիս. այն է աւրաւան, նուազ, գումարտակ, դղեակ, որոնք փոխառեալ են սահմանակից Պարսկաստանից: Նման փոխառութիւններ կարող էին գտնուել հիւսիս արեւմուտքում (վրացերէնից), հիւսիս արեւելքում (աղուաներէնից), հարաւում (ասորերէնից): 3. Բառեր, որոնք բնիկ հայ են, այսինքն հնդեւրոպական ծագում ունին, գործածական են այժմ բարբառներում, բայց չկան զբարառում: Սրա համար պատուական մի օրինակ է մոտեն «կրծել», որ գործածական է այժմ Քանձակ և Ղարաբաղ (ծագում եւ հնի. մրգ արմատից). հմմտ. սանս. մրզաթի, լու. մոռգեռ, ֆր. մորգը): Այս կարգի բառերի համար ա'յն միայն կարելի է ասել որ նրանք շատ աւելի հին ժամանակ, այսինքն երբ հայերը Հայաստան մտան (Ն. Ք. Գ. գար), ընդհանուր էին հայերէն լեզուին. Հայաստանում մտնելուց և զանազան գաւառներում հաստատուելուց յետոյ կենտրոնում ջնջուեցին, եւ մնացին միայն այս կամ այն գաւառի մէջ, և շառաւնակում են մնալ մինչև այժմ:

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

## ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆ

### ԹՈՐԴՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ԳՈՒՇԱԿԵԱՆ

(Նարանկութիւն նախարդ թիւն)

Ալպօյաճեանի վրիպանքին գլխաւոր պատճառը այս հաստրին մէջ, եթէ բառը վիրաւորիչ չի հնչէր, Թորգոմ Սրբազնը չճանչնալէն կը բխի. չէ կրցած անոր ծերութենէն իշնել մանկութեանը, շրջապատէն հոգիին, գործերէն՝ մտածողութեան, նկարագրին: Զէ յաջողած որոշ կերպով ճշգել, հակառակ իր առատազեղ փաստերուն, թէ իւրաքանչիւր մարզը անոր կեանքին ինչ բերած է իրեն. ու երեւան չէ հանած թէ Սրբազնին անձը ո՞ր չափով «լուծուած» է (բառը կը գործածենք բնագիտական առումով) իր գործերուն մէջ: Մարգկային այն շրջանակը որոնց մէջ ընձիւլ առաւ անոր անձնաւորութիւնը, վայրերը որոնք զինք սնուցին, կը թուարկուին և կը տոմարագրուին միայն, չեն բացուիր, չեն տարրանար, աւելին՝ չեն գտներ ոգեղէն իրենց տարողութիւնը: Թորգոմ Սրբազն իր եղիշէ Պատրիարք Դուրեկան հատորի մէջ տասնեկինդ էջերով կրցած է տալ ժամանակի, անձերու և հոգերանութիւններու աշխարհ մը: Ալպօյաճեան 70 էջերով կը փորձէ տալ Պատրիարք, զայն շրջանակ ընելու համար Թորգոմ Սրբազնի հոգւոյն և նկարագրի կազմութեան, սակայն շրջանակը կը մնայ պարապ, կարծես թէ ան Թորգոմ Սրբազնի համար շինուած չըլլար: Նոյնքան էջերով կը ջանայ զիմազձեւ Արմալը իրեւ շարժում և ոգի. եւ սակայն ինչ կը կարծէք թէ ըսած ըլլայ այդ սրտառուչ շարժումի մասին, որուն հայկական խորքը, և արևմտեան յառաջաւագ հասկացողութիւնը՝ իրարու հետ հաշտ ապրեցան կանխող զարու վերջին քառորդին. որ իր կրօնական ու ազգային գործունէութեամբը պիտի ընդարձակէր իր պարունակները, ընդգրկելով ժամանակի մեծ մտահոգութիւնները մեր եղերաբախտ սերունդին. այս ամենէն՝ ոչինչ, բայց միայն

շարք մը անձերու բացասական կողմեր, և խնամակալութեանց վէճեր։ Զենք շարու նակեր։ Նախորդ թիւի մեր առաջին յօդուածով մատնանշեր ենք արդէն այս բոլորը։ Իսկ Թորգոմ Սրբազանի Սեբաստիոյ, Եղիպտոսի եւ Երուսաղէմի մէջ ունեցած տարիներու կեանքն ու գործը կը վերածուին ժողովական, քարոզական, զրական և ուրիշ կարգ մը ազգային կարիքներու սատարման շատ համեստ ճիգերու, ընդմիջուած յաճախ կուռակցական հակամարտութեանց հեշտագին պատկերացումէն։ Զի յուցուիր Թորգոմ Սրբազանի տեղն ու գերը իր ժամանակի մէջ։ Սլավյանեան չէ կրցած բռնել այն էական գիծերը օրոնք Թորգոմ Սրբազանը կը յօրինեն, ոիթմէն տակը չէ անոր անձնաւորութեանը։ Մի զարմանաք որ Թորգոմ Սրբազան առանց Խրիմեանը տեսած ըլլալու, ճանչցած է զայն խորապէս, իսկ Սլավյանեան, ապրած ու գործած ըլլալով հանդերձ Թորգոմ Սրբազանին հետ, մնացեր է գրեթէ անհաղորդ իրեն։

Հատորը հակառակ իր ստուար էջերուն, մեզի չի տար Թորգոմ Սրբազանի անձին յղացքը, անոր հաւատարմութիւնը աղջին յաւերժական ոգւոյն, եւ Հայ Եկեղեցին ու անոր մեծ սուրբերուն աւանդութեանը, անոր մտքին թափանցող նկարագիրը, մարդերը ճանչնալու և զանոնք իր հետ ունենալու կախարդանքը, ողջմառութիւնը, իր սրտի մարդու հանգամանքը որ ամենէն քաղցր կողմը մնաց միշտ իր նկարագրին։ Յետոյ չէ բարացուցած իտէալի մարդու իր տիբական կողմը։ Թորգոմ Սրբազան մեծ հեռազատկերներ ընդդրկող, և բարձունքներու սեւեռաբիր մարդը եղաւ, նըպատակը իր մէջ ամէն օր ապրող և երբեք չսպառող իրականութիւնը գարձաւ։ Ու այդ մտածեսիլը ուրիշ բան չէր եթէ ոչ խոր ներհայեցողութիւնը իր ցեղին խորհուրդին։ Մեր պատմութիւնը անոր համար յաջորդութիւններու շրջան մը ըլլալէ աւելի, հերոսական ու արիւնոտ ոգորումներու դըրօշակրութիւն մըն էր, տառապանք մը՝ յանուն սիլոյ կրուած։ Մեր անցեալը ըղոգալու, մտածելու այդ կերպը կը մօտեցնէր զինք մեր եկեղեցական մեծ զէմքերու ողիին և իմաստութեան։ Այդ մըտատեսիլի մղումին տակ է որ ան գոր-

ծած, խօսած, առաջնորդած և հեղինակած է հաւասար եռանդով։ Զակնարկեցնք տակաւին իր գրագէտի անձին։ Սլավյանեան հազիւ կը մօտենայ Թորգոմ Սրբազանի այդ հանգամանքին, և սակայն Թորգոմ Սրբազան որակելի է մեծ չափով միայն իր գրականութեանը մէջ։ չվերլուծել իր այս կողմը, կիսով ճանչնալ է զինքը։

Սլավյանեանի գործին մէջ անյաջող է նուե ժամանակի համազրումը, և այս չի ստացուիր դէպքերն ու թուականները քով քովի բերելով։ ասոնք իբրև ատաղձ գերմունին անչուշտ, սակայն չէնք մը բարձրացնել ուրիշ բան է։ Թորգոմ Սրբազանը կեդրոնական անձնաւորութիւններէն մին եղաւ այս վերջին քառորդ զարու շրջանին, իր բոլոր երեսներով։ Անոր նուիրուած հատոր մը՝ չուներ ուրիշ սրտայոյզ պարտք մը քան այդ պատմութիւնը համազրելու վսիմ ձեւնարկը, և սակայն ատիկա չէ եղած։ Թորգոմ Սրբազանին գերը համեմատուած մեր վերջին յիւնամեակի մեծ զէմքերուն՝ բացարձակ գերազանցութիւմը մը չի պաշտպանուիր անչուշտ։ Ան ո՛չ Խրիմեան մըն է, ո՛չ Դուրեսան մը, և ո՛չ ալ Օրմանեան մը, ասոնցմէ իւրաքանչիւրին հետ մեր մտքին մէջ պատմական ստուգութիւն մը կը ճշառի, խորհրդանշան մը՝ եթէ կ'ուզէք։

Թորգոմ Սրբազան գիւրին տարագելի անձնաւորութիւն մը չէ։ բայց մարդ մըն է որ ներկայ է բոլոր մեզ յուղող հարցերուն իրարու հանդիպման կէտին։ Գիրքը մեր մէջ չարթնցներ վերոյիշեալ ըզգացումները, և կը մնայ իրեն հետ հազիւ կապ ունեցող դէպքերու և թարթափումներու հաւաքոյթ մը, որոնք կրնան լաւ ատաղձ ծառայել Թորգոմ Սրբազանի ապագայ կենսագրին, բայց չեն նուածերինչ որ աւագ փառասիրութիւնը պէտք է կազմէր պատմութիւնը կեանքի կրկէս մը ընդունողներուն համար։ կրկէս մը՝ ուրիշ սովորէինք մեր անցեալը, անոր գասերը, անկէ գալիք սրտապնդիչ կորովը մեր օրեկրուն՝ երբ մեր ներկան այնքան «նըսիմաստուեր» է ինչպէս կ'ըսին, այնքան պարպուած՝ կրակէ, հաւատքէ, բարձր գատարու սպասին համար անձնայարդար հերոսներէ։

\* \* \*

Երբ այս տողերը կը գրինք չենք կը ըստ չանդրագագանալ այս անբռւականութեան հեռաւոր պատճառներուն, որոնք կու գան արեմտահայ զրականութեան մէջ ընդհանրացած վարժութիւններէ: Հարիւր տարսւան կեանք ունի այդ գրականութիւնը, բայց ոչ մէկ հատոր՝ ուր մեզի արուած ըլլար հաստատել մարդոց կեանքին և անոր անդրագարձին զիրար պաշտպանող երջանիկ չաղապատումը: Չենք փնտուր թէ ինչո՞ւ մեր պատճութեան մեծ գէմքերը կը մեան մէկ երեսով պատկերներ, փոխանուկ ըլլալու ամբողջութիւն: Պարտք է մեզ յիշել Արշակ Զօպանհանի Մկրտիչ Կէջիթաշլեանը, Թորգոմ Եպիսկոպոսի Խրիմեան Հայրիը և Դուրեհան Պատրիարքը, որոնց մէջ ըրջանն ու մարդք, իրողութիւններն ու անոնց թաքուն զսպանակները, գէպքերն ու անոնց հոգին, ըլլան որոշ չափով զիրուծուած այնպէս՝ ինչպէս կը տրուի մեզի երբեմն հաստատել օտարներու մօտ: Ժթ. գարու ամեննէն ընթացիկ ու փնտուուած սեռ՝ Essai, նորոգած է, կեանք մը պատմելու, մարդք մը տալու հին կերպերը: Ա. Ալպօյանեանի առիթով կը զգուշանանք մեծ անուններ սկեկոչելէ, բայց կը շարունակենք պահել մեր վիրապահութիւնը ուղղութեանը գէմ որ ուղղափառ յաւակնութիւններ կը տածէ: Կայ թիւէն, թուակնէն, փաստէն, պատմական ստուգութեննէն վեր, ոգեղէն իրականութիւնը: Կայ նոյնպէս այդ իրականութիւնը նուանելու արուեստի կերպ մըն ալ: Չենք կը նար պահանջել որ ամէն կենսագիր արուեստագէտ մը ըլլայ, բայց մեր իրաւունքին մէջն ենք, երբ նիւթական աշխատանքի, պրապումի, նօթի և հաւաքումի առաջումը, միջոցները կը յաւակնինք լուսապակել, գերզնահատել, մասնակով թէ կեանքով զրազելու ամէն ձեռնարկ, նոյն ատեն ստեղծագործութիւն մըն է: Այդ ստեղծումն է ահաւասիկ որ իր պակասովը մեզ կը տառապեցնէ այն հատորներուն մէջ՝ որոնք կը խօսին մեզի մեր բարձրագոյն արժէքներէն, զանոնք իրակերտող ուժերէն: Ինչ թանկագիրն զիրք պիտի ըլլար Ալպօյանեանի հատորը եթէ եր-

բեք անիկա մեզի բերէր այս գոհունակութիւնը:

Արեւմտահայ գրականութեան՝ ինչպէս պատմութեան համար, մեր փափաքն է այս ոգիին ընդհանրանայլը բոլոր աշխատաւոր ներուն խղճմանքէն ներս:

Չենք ուզեր այս սուզ էջերուն մէջ ընդհանուր տեսութիւններու ցուցազրում մը ընել, ատիկա մեզ հեռուներ պիտի տանէր, բայց տեղն է որպէսզի յայտնենք մեր ցաւը այն խոչոր պարապին համար զոր կը զգանք երբ կը մտնենք մեր իմացական սրբարանէն ներս: Հոն են մեր մարդերը, մեր պատմութեան ու գիրին բոլոր հսկաները, բայց առանց յիշատակարանի, առանց պատգամի: Հոն էլն, օրինակի մը համար, Ֆրանսացիներուն բոլոր հսկաները, գարեր զարերով առանց յիշատակարանի: Միշլէ մը այդ ամայքին մէջը ամբողջ ժողովուրդ մը զրաւ, ու մարդերը կ'ապրին այդ հեղինակին պատմութեանը մէջ: Կրնանք աւելցնել Սէն Պօվի Բօր Ռուայեալը, արբա Պրէմոնի բազմահատոր աշխատանքը, կրօնական զգացման պատմութեան շուրջ Ֆրանսայի մէջ, և Խօմէն Ռուանի Միշլէ Սնժը: Այս հատորներուն վերծանումը յաղթանակ մըն է ամէն ընթերցողի: Ինչո՞ւ չգրուէին մեր մէջ զիրքեր՝ որոնք նոյն նպաստը բերէին մեր մտքի ինչպէս հոգիին ազատագրութեան: Նարեկացի մը, Շնորհալի մը, Լամբրոնացի մը, նոր ժամանակներու մեր մեծ մատենագիրները ինչո՞ւ չմատուցուէին մեզի այն լիութեամբ, խորութեամբ, ճշգրրտութեամբ, զոր կենդանի ապրում մը, հանդարտ և խորացող մտածում մը, և պարկեշտ ու խղճամիտ վերկազմումը միայն կ'ընեն կարելի, կ'ընեն զեղեցիկ, մեր մտքի ու հոգիի ափտանները վերածելով յաւերժափառ և անմահ հերոսներու:

Շատ չէ մեր պահանջածը:

Ե. Վ. Տ.



## ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

իթ

Ապրօ Զելեպուն թէմասուզներն են այս փօխցայ:

Երկիրագաղանեմք առաջի մեծիդ և լընդումք ի Քրիստոսէ որ քո հրամանքդ անփորձ ամենայն չարէ պահեսցէ վասն մեր, ամէն:

Մանիք, հոգեռորմէր, թէպէտ ամենայն եղեալն գրեցանք Աէֆար ծառայիդ հետ, ապա թէ Ռ զիր գրէի ամենայն յերկիր, Ակոր չկաթուզիկոսին յիշութիւնն չէի կանար պատմել. Աստուած այլ իր խելաց կաւրա է իրեն տվիր, Երբ տեսայ՝ յայն օրէն ի վիր գոհութիւն կու տամ անպակաս, որ զքեզ ունիմք քովսն մեր: Գրէ եջմիածին, որ ուրիշն զնեն, մենք էլ գրեցանք հաւասարով. թէպէտ աներեսոյթ եղել Բուտամպօլու միջէն: Ապա կ'ասեն ճշմարտիւ որ կտրանէ է զնացեր, ես այլ քանի սէֆէր յառաջ զնացի. իսկի հոգ մի քաշեր, Աստուած ողորմած է, համան զիս աղօթից մի մոռանար. ամենայն բանն կարի եղեալ է: Դարձեալ, իմ հոգւոյ հոգի, այս զիրս բերող Խօճա Կարապետէն, Խօճա Աղամէն ու մէկ Մուստաֆա չէլէպի անուն տաճէն երեք հոգէն ժի զոշ. առանք, Ռ զոշ. շահով ու Ճ զոշ. էլ ճանփու խարճլը, որ կ'անէ ԺԱ.ԺԸ (11,100), ու իւրեանց ձեռացագիր տուի, խավէ արի՝ թէ այս Կարապետս երթայ առ հրամանքդ, քո մեծութեանդ վրայ եղած ըստակէս թէսլիմ անես: ԺԱ.ԺԸ զոշն. թէ որ չի տաս ետ զառնայ կամ ընկերոցն զիր գրէ քո հրամանուցդ չտալուն, ես իւրեանց ԺԲ.ԺԸ զոշ. պարտատէր լինիմ, գան ուրտուն զօրէ զիս գտանեն, տամ անպատճառ. ԺԲ.ԺԸ զոշ. ձեռացագիրս այլ իւրեանց մօտն մեաց, չտուին այս Խօճա Կարապետին որ հետն տարեր էր: Այս մարդս այս գրէս ի զատ հետն զիր չունի, կու խնդրեմ քենէ՝ հասանելուն պէս այս Խօճա Կարապետին ԺԱ.ԺԸ զոշ. անպատճառ, անպատճառ իւրեն թէսլիմ անես ու ձեռնէն զիր առնես այլ ու Մէֆարին հետն ինձի օրտուն զրկես, որ իմ թէմասուկս յետ առնեմ: Աչացս լոյս հու-

գնորտէր, աղաչեմ ի քէն որ այս մարդս շատ չի բանիս, շուտով տաս զրկես և քո հրամանքդ էլ շուտով շուտով ելանիս զսս Հստամպօլ. մինչեւ որ դու չիպաս՝ այս աղմաւնքն չի վերանալ այս աղգէն, ու իմ զուսուր մնացած ըստակն հետ բերես, ու ինչպէս որ Հստամպօլ հասնիս, ինձի Մոռայ մարդ զրկէ որ իմանամ: Դարձեալ իմ հոգւոյ հոգի, այդ չափ վախս ունիմ սիրսս, որ կու վախսեմ վէզիր աղէմն ինքն կիրիտ անցնի ու շատ նստինք, այլ բանէն չեմ վախսեր: Առ իմ հոգւոյս հոգի, մինչև Հստամպօլու փաթըրկութիւնն խէթիչքիփ մուճպունճայ չի մնի, գ. գ. տարի որ նստողքն քո կողմէն չլինի՝ հոգւուր չես աներ: Զանք արա՛ շուտ ելնես Հստամպօլ գաս, այլեւայլ մի՛ աներ: Մէկ հոգմի հարեղայ եկաւ Հստամպօլ, երեք աղգի վանքէն զիր ունէր Շամայ փաշայէն չգայ եթ՝ զի մէկ զիր էլ ինձ էլն զրիր միրաբանքներն, առի այն մարդն օրտուն տարի համու որ բանն շինեմք: Հոկտեմբերի իհ: Արրահամ ծառայ: [Մթձմել = 1666]:

Լ

(Ազգային ուսանել Կ. Պոլսէն առ Ելիազար կարողիկոս):

Տեառն հոգեռոր և հօրդ որբոյ մեր ի վերայ բարձրագիտակ աթոռոյ կայացեալ ճոխութեամբ ի փառս և ի պարծանս հայաստանեաց Տէր սուրբ Եղիազար կաթողիկոս եպիսկոպոսապետ, ա՛ռ ընկա՛լ զնուաստ որդիկաց և ծառայից քոց մեծութեանդ ողջուն և զերկիրստագութիւն տատուածարեալ գարշապարացդ և յաղօթս քո երկնամատոյց և եթ յիշելոյ կարօտելոց նուաստ Առղումանէս, Մկրտիչ, Կոստիկ, Մինաս, Պէկւէր, Աստուածատուր, Քրիստոսոտուր, Տօնիկ զալֆայէ, Արգմանէ, ի Վարդանսք և այլ սիրելիք: Որում յուշ առեալ ծանուցանեմք հրամանուցդ որ ի գալուստ Յակոբ կաթողիկոսին շատ վրգովմունք եղեւ ի մէջ մեր և նոքա կամէին զմեզ և ջանային յաղթահարել բազում անգամ և Զէլէպին այլ հնարիւք և ջանիւ չժողովր զգործս նոցա յառաջ տանել, այլ կրկին թուղթ և մուղարտար հրամանուցդ համար բերել ետուր

կտրանու և շատ ջանաց խաղաղութեան, նոքա ոչ կամեցան, այլ այժմ Յակոբ կաթողիկոսն եղեւ աներեւոյթաբար ի քաղաքէս և ի խանէն և ասացին՝ թէ գնաց յիշրանէ, ոմանք՝ թէ խուսափեալ, և Զէլէպին այլ մարդ հոգաց և եղ ի քաղաքէս և ի թէ-քիրտաղու և ի յիշրանու, որ արթուն մաւով զգրունս պահեն և ինքն ել և գնաց Հոկտեմբեր ին. և զայս իօնաւ Կարապետու ողարկից առ հրամանքդ. ալի զօմիչ կամ էկաթիւ չանես զայս մարդու. հէլպէթ հէլպէթ ապրանքով ճամբես, որ երթայ իւր բանն և որ չուտով իւրն թուզթ զրկես, որ այն մարդուն սիրտն այլ տաքնայ և ի պարտուցն թեթենայ: Զգիտենաս հրամանքդ թէ զայս թուզթ մեզ Զէլէպին ասաց զրել առ հրամանքդ, այլ մեք աեսաք զնորա զայրաթն և զզահմաթն հրամանուցդ և մեղ համար, վասն այն գրեցաք, որ այլ կոնակ և տայանձաղ տեղ չունիմք. վերն զլատուած և վայրն զայս ունիմք: Աղա-չեմք, աղաչեմք, զպազատանս մեր անտես չառնես զինդիրքս մեր անյապաղ և անպատճառ կատարելով: Եւ այս բաւական է իմաստութեանդ. որպէս և յառաջազոյն զրէաք առ հրամանքդ՝ չեիր լսեր, հիմայ էլ կու զրեմք և զրեցաք զալ թէզով, խա-դազացուցանել զվրդովեալքս: Ողջ լեր ի Տէր:

Դրեցաւ Ռծմի ( = 1666 ), Հոկտեմ-բերի ին, յաւուրն հինկշաբաթի:

ՀԱՅԻ ԿՈՍՏԻԿ ՍՈՀՈՒ ԽՈՃԱ

ԶէլէՊԻ ԱՍՏՈՒՄՄԱՑՈՒՐ

## ԼԱ

(Եղիուզար կարողիկոս Կրեսէն առ ազ-գայինսն ի Կ. Պոլիս):

Եւ ընդ օրհնութեանս բանի անդրադա-ձութիւն պատասխանեաց մերոց ըստ ձեզ համարձակութեամբ եւ յաճախութեամբ, ոչ անօգուտ ինչ բարդելովք և ոչ կրկին կրկին կուտակելովք, ոչ սպառնալեաց արհաւանօք և ոչ ողոքանաց ինչ քծնու-թեամբ, այլ զմեկն և զիրաւն և զներա-մադրութիւն ներքին մարդոյս և զկիրս ար-տաքնոյս առաջի տեառն Աստուծոյ և ա-ռաջի ձեր տարածանեմ: Քանզի և ի բնա-

կանաց և ի բարոյականաց և ի վեցեկին խոկ օրինադրութեանց զիտեմք ընտրեալ զիրաւունս ճշմարտութեան բանականս մա-սին, և խոտեալ զհակասութիւն նմին: Աւո-տի և քննողն սրտից և դատաւորն ամե-նայն չնչոց, զինքն խոկ եցոյց զոլ ճշմար-տութիւն, և զհակագարձ նորին զոլ ի հօ-րէն չարեաց: Արում ճշմարտութեան հե-տեալ ամենայն ազգք և լեզուք բնակա-նապէս խնդրակացութեանն ճշմարտութեան, որ է ըստ առաքելոյ՝ սէր, խնդրութիւն, խաղաղութիւն եւ ալին: Եւ այսմ ըլքացեալ ձերոյ որով և զրեալ էք առ մեզ: Եւ այսմ ունիմ զձեզ խոկ վկա-յիալս աստանօր՝ թէ խնդրակ իցեմ սմին, և երեցաւ խոկ յարգեանս երկաքանչիւ-րոց հաւատարմութիւն՝ որուէ ի սիրտ խօ-սեցեալ, ըստ որում խորհուրդն իմ ինձ և իմոցն: Քանզի և նա խոկ որ ոչ կարծէր բնաւ զմէնչ, զգոյն ինքնին զիջեալ՝ ի սէր և ի խաղաղութիւն միջնորդեաց երբեմն ըզ-Մարտիրոս վարդապետն, որ արար զկատա-բեալ խաղաղութիւնն և երարձ խիկապէս զկրնիմն պատրուակի յերկաքանչիւր կող-մանց և յայտնի ևս հաւատարմութիւն միջ-նարկութեանցն այնոցիկ, զի աղջմամբ Հո-գեոյն սրբոյ ի նոյն աւուրս Պայծառակեր-պութեան Տեառն, յորում և մերս հաստա-տեցաւ սէր ուխտի խաղաղութեան, և զա-ընդ ձեզ զնոյն ի նոյնում աւուրս խորհըր-դածեալ հաստատեցաւ ի վեր քան զառա-ջինն սէր և ուխտագրութիւն դաշնակու-թեան աթոռոց սրբոց և հետեղողաց նոցին. որով ցնծացին ամենայն ազգք և բերկրե-ցան համայն հաւատացեալք, որով և զրել կամեցայք առ մեղ զնոյն աւետալուր համ-բաւն: Բայց որ սովոր է հրապուրել զբա-ժակն քաղցրութեան և խարբալել ըզցոր-եանն պատուական, զրգուեաց և զձեզ խառ-նել և ընդ քաղցրաբանութիւնս ձեր զայս՝ թէ եկեցես եւ տեսչիք զմիմեանս: Եւ այս ընդէ՞ր. եթէ զիս կարծէք ո՞ն, ո՞չ ապաքէն և ես ունիմ ի ձեզ կարգեալ եր-կոտասան իշխանս. եթէ այն խորհուրդ ոչ յարգեցաւ, զիա՞րդ և այլ բանքն իմ լիցին յարգելիք: Եւ եթէ իցեն ա'նպէս, ընդէ՞ր ոչ ևս բաւականացաք նոքօք երաշխաւու-թեամբք, և կամ թէ ե՞րբ ստահակեցայք ի բանից նոցին, զի կարօտացայք զիս ինքն երեսաքարշ տանել առ ձեզ: Եւ եթէ հարկ

իցէ ըստ ձերում իմաստնախոհ մտածութեան առնել զայդ, ո՞ւր էր այս խորհուրդ մինչև ցայժմ, և ո՞ւր էր այս պատուէրն մինչև ցարգ, ո՞չ ապաքէն և ես կամէի զոյն, և ընդէ՞ր ապա ի կիպրոս կացի թացի զայնքան աւուրբք, ո՞չ ապաքէն կամք իմ և խորհուրդ ակնարկէր ի զոյն, ո՞չ ապաքէն գիտեմ և ես զդա այր կաթողիկոս յաթոռն նախագահ և հրամաւորց, և ամենայն օրինօք ինձ պարտ էր առ զա խունարհել և առ զա զիջանել, ո՞չ ապաքէն ի կիպրոսէ մերձ էի առ ձեզ, և զիւր էր ինձ, և չունէի ես այլ իմն հոգ և կոծ, և կայի անձնագատութեամբ: Եւ յայնժամ կուեցան կապեցան բերանք ձեր, ոչ միայն զայս, այլ և զլոկ պատասխան թղթոց մերոց տալ մեզ: Եւ արդ նէտէն սօնրա իմ տէրն ինձ տիրեաց, իմ էֆէնտին ինձ իշխեաց թղթովք և արամք, բանիւ և գրով կրկին կրկին պատուիրելով՝ թէ առ իս զարձցի, մի՛ երբեք մտածիցէ երթալ ի կոստանդնուպոլիս կամաւ հոգեորտէրն: Քանդի զի՞նչ բաժին գոյ ընդ նոսա. ո՞չ ապաքէն առ իս է բանք և խորհուրդք հոգեորտիրին, և ես իսկ եմ հոգեորտէրն: Որո՞վ բանիւ և հրամանաւ իրը ի վերայ երեսաց մերոց ընդ կրունկս դարձուցեալ զմեզ աստ ի Հալապ, որ և փելոնի և վեղարի կարօտ եկեալ՝ ի տեղս կրկին զնոյն առաջ արկի բան երես առ երես, թէ զու զայդ ասես և նորին կամն զի՞նչ իցէ, մի՛ զուցէ հարկիցիմ զկնի բեռանցս այսոցիկ և այլ իմ լծոյ, և նա զէմ յանդիման՝ ես իսկ եմ հոգեորտէրն, և ամենայն բանք նորա ի վերայ իմ զասելն միթէ ո՞չ կարիցեմք ճշմարտել, և մինչ ոչ միամտէի յայզմ կողմանէ, զիա՞րդ արկանէի զանձն իմ ի ներքոյ այսքան անհնարին պարտեաց և անձարակութեանց: Եւ որովհետեւ եղեւ այսպէս, զի՞ ես այսուհետեւ սպառնական բանիւ ձեր տիստիմ(?) թէ չիք այլևս օգնութիւն քեզ ի մէնջ, և զի՞նչ իցէ օգնութիւն մեր ի ձէնջ, որո՞յ աւուրց, որո՞յ տտենից, որո՞ց ժամուց. եթէ զոյր օգնականութիւն ձեր, ո՞ւր էիք՝ մինչ մեք ի Սուլբ երուսալէմ հանգերձ բիւրապատիկ վշտակրութեամբքն ի չորս ամիսն եօթն չաւիշ սաւմիշ արարաք, յորոց երեքն վասն Ռէմլէյու եկեղեցի շինեալ ես ասեւով՝ ի մէջ աշխարհի խայտառակ և նշաւակ արարին զմեզ, և մեք զլուկ և ազգելով

ձեզ՝ չմաց ի մեզ օգնութիւն՝ թէ, մարդկիկ, մեզ ճարակ և օգնութիւն ինչ արաբէք, այլ ոչ կարեմ կալ աստ ի ձեռանէ երկու տղայոյ ի Շամ եղելոյ ի դոցանէ դրելոյ: Մը ին էր ձեր օգնութիւնն, որ զրեցիք մեզ՝ թէ զգոյշ լե՛ր ի գքսէն Դամասկոս կեայ, ապրեցն՝ զանձն քու: Զիա՞րդ զգուշանայի, ո՞րպէս ապրեցուցանէի. միթէ կարէի՞ ես տալ նմա զերեսուն քսակն, զոր խոստացեալ էիննոքա հրամանաւ զոյտ: ո՞չ ապաքէն երեսուն փարայի ծախէր զգլուխ իմ: ընդէ՞ր յայնմ ժամու ոչ երթայիք զուք ձերով լնդ յիշումն անուանս: Խայտացեալ մանկամբքն անկանէիք յոտս հոգեորտիրին ձերոյ՝ թէ խնայեալ տէր, կեցն տէր, մի՛ մերոցի անձն նորա ընդ հեթանոսս: Եթէ արարիք, ո՞չ ապաքէն և նմա պարտ էր լսող լինել ձեզ, և թէ ոչ արարիք, զի՞ ես առանօր յարուցեալ էք ի վերայ իմ: չիցէ՞ ինձ այն ամենայն բաւական երկունք և ցաւք, չիցէ՞ ինձ բաւական որ իմովքս մատղահասակ մանկոտք, իբրև զօտարատեսուչ և իբրև զպատժապարտ տարագէպ փախստեամբ յաւուրս տօնից և ուրախութեանց, ըստ մարգարէին, գարձուցեալ լոգտոն մեր ի սուզ, և զտարեկանս ուխտաւորացն ի լալօնս: և եթէ ո՞չ էր Տեառն զօրութեանց այցելութիւն յայնմ անակնկալն ժամու ի բարբարոսաց ցուցեալ մարդասիրութիւն, ապաքէն ընդ մեսեալս յաւիտենից համարեալ էաք: Եւ այն վասն է՞ր, ընդ որո՞ց փոխարինաց մերոց առ ազգդ հայոց, և արդ ո՞չ բարւոք էր յայնմ ժամու աղաւանօք զերծուցանել զմեզ յայնց արհաւարանաց, քան թէ զկնի լիշտակել զանուն մեր ի պատարագն: Եւ զի՞նչ ինչ ուզզութիւն գտաւ յիս յայնց աւուրց հալածանացն՝ մինչ ի Պայծառակերպութեան Տեառն յաւուրս, յորո՞ց չարեացս դարձայ, զի՞նչ ինչ գործ ապաշխարութեան ցուցի, որ երբեմն մահապարտ և աքսորական, և զկնի երկուց երից ամսոց ի պատարագն սուրբ լիշտակեցայ, որովհետեւ ի միում ամի տասն անգամ բառն զելոնի և զնի անուն մի ի սուրբ պատարագն: անունն այն ի սեն գրեսցի: Եւ զայն ես միթէ ձե՞րդ կամաւ, ո՞չ ապաքէն իմոյս էֆէնտոյ՝ Մարտիրոս վարդապետի հրամանաւ, զի՞նչ ես միաց ձեր առ այս, որ մինչ ի սանդիւայս խրախութեամբ զի՞մէիք ի քաւարանս, կամ թէ նովա՞ւ կա-

միք բժշկել զվերս իմ։ Քանզի թէ ունիմ ես ինչ երախտիք և աշխատանս ի վերայ ձեր և տանն սրբոյ, հաւատամ եթէ նա՛ ինքն ոչ միայն ի ձէնջ, այլ և երկուառն աղքաց քրիստոնէից մատուցելոց պատարգաց մասն և բաժին ընծեռեցի ինձ ի հոգի և ի մարմին իմ։ Խոկ եթէ աղքի ձերոյ և տանն սրբոյ մազի միոյ խեռութեամբ և վնասու ջանացեալ եմ, ի դատապարտութիւն է առաւել լիչատակութիւն անուանս քան թէ ի պարծանու եւ զի՞նչ է ի վերայ այսոր ամենայնի յաւելիալ եւ զայս՝ թէ վերջին է այս մեր գիր առ քեզ, զոր եղիցի ըստ բանի ձերում, քանզի թէ վերջին և թէ առաջին, ոչ ի փողահարելո միք գտաք զձել կաքառողս, և ոչ յողբալո մեր՝ լացողս, այլ մեք մենեալ և Աստուծով յարոցեալ, աստանօր զմիջնօրդ յարութեան մերոյ գիտեմք, զազատիչն մեր միայն ճաշնաչեմք և զծառայութիւն նորին հազիւ կատարեմք, և զյիշեցեալն ի ձէնջ զնախասացեալն զմեր բան, թէ յորժամ ինձ Յաշկոյ կաթողիկոս պիտոյանայ, ես գիտեմ զնա, և յորժամ նմա Եղիազար կաթողիկոս պիտոյանայ, նա զիս գտանէ։ Յայնմ ժամու ասէի, մինչ ես աթոռատէր կարծէի և կաթողիկոս ձեանայի, այնմ աթոռատեարքն ողջ կացեն և զայն ինքնանք գիտացեն։ Զի՞ կայ իմ ի մէջ նոցա, ես մէկ վէքիլ մարդ, միայն թէ զկամո Տեառն իմոյ առնեմ և սրտի մտօք յօժարիմ մեր ի սոյն։ բայց երկուց տէրանց ո՛չ կարեմ ծառայել։ Եւ թէպէտ լիցի ինձ ևս արժանաւորութիւն աթոռոյ Սրբոյ Երուսաղէմի, յայնժամ և ես զնատեալ կաթողիկոսն ի Սուրբ յիշմիածին դիւրագոյն գտանեմ, նմանապէս և նա զիս Քանզի երկու աթոռք են պիտանացու ազգիս, և երկու աթոռատեարքն հարկին զմիմեանս գտանել, և ոչ Յակոբն և Եղիազարն, որ և ոչ անզամ տէնեալ եմք զմիմեանս, և ոչ առ բնաւ առարկեալ երես առ երես, այլ միջնորդող առարկողաց այլարանութեամբն զանազան կարծեցեալ զմի և զնոյն կամս միմեանց։ Եւ այժմ ողորմութեամբն Աստուծոյ, թէ և ոչ մերովս ձեռօք և բանիւ, զոնեաւ այլովք հաստատեալ կատարեցաւ գիտաւորութիւն սրտից մերոց։ Եւ այսուշեալ ո՞վ է որ զրդէն և շարժէն, գեռ ես ոչ թողլով գերկաքանչիւրքս յիւրաքանչիւր

ցաւս և ի կոծս։ Զի՞նչ ես կարծէք զմէնջ, որ այսքան ահացուցանողական սպասնութիւնք մեծաբանեալ էք ի վերայ իմ։ Մեք վասն մեղաց մերոց խոնարհեալ, զելս անձին մերոյ հնարեալ, զմեզ ի ծառայութիւն ումեմն տըւեալ, կամք ի վերայ երեսաց մերոց շիւարեալ, ի ներքոյ անհնարին պարտեաց զառածեալ, և այսքան մեծաբանութեան ձերոյ զի՞ ևս իցեմք պարտական։ Եթէ ոչ ունիք ճար առձեռնական, ընդէ՞ր լինիք բժիշկ մեղանչական։ Դուք ձեր հանգստութիւն և յերկարախօս իմաստութիւնն կշտութեամբ մեզ քաղցելոց մի ժանրագոյնս բրգիցէք։ Դուք այն քաղաքացիքն էք, որ յամենայն ամիսս և յամենայն շաբաթս ստէպ ստէպ զողջունէ զերուսաղէմէ հարցանէիք, ընդէ՞ր այժմ ամենայն մոռացեալ, զպարտս և զծախս սուրբ տանն ոչ հարցեալ, զսղութիւն և զաժանութիւնն երկրին ոչ յուղեալ, Հասան փաշամուսաւատասին ոչ որոնեալ, զիմ ի տեղս այսքան նորագոյն վասն տանն խարճի պարտաւորիլու ոչ ակնեալ, չքաւորութեանս և պակասութեանս ոչ հաւատացեալ, զրէք անխիլձ՝ թէ ե՛լ և եկ։ Որո՞վ ելից և եկից, հինգ վեց հարիւր զրշ։ կարէ զիս հասուցանել։ Ես չունիմ յաջ և յահեակ Մասիս և Արագած, Խորով և Խմբրզա, որ յորոց լերանց հնչիցեն հողմունք՝ նովաւ շնչարերեալ խօսիցիմ։ Խերաքանչիւր ոք զտան իւրոց պակասութիւնն և զելս անձին ինքնին զիտէ։ Ո՞ւր թողում զաւազակաց բոնանալն ի ճանապարհի և զկողմնակալաց սպասելն սեազլիսի։ Քանզի այնքան պղտորեցին քօր Պետրոս եպիսկոպոսաւ զեզէ ի զեզ կտոր կտոր թղթերով, և Կոկ տօլախներն զանուն մեր աղճատելով, որ մինչ ի տեղիս տեղիս լսի։ թէ պատճառու մերով և զյունաց սեազլուխքն զզուեն և կոփահարեն։ Վասն Աստուծոյ թողէ՞ք զմեզ, մարզի՞կ, ի մեր խղճանքն և ի տառապանքն, ի մեր յաղատաւորութիւնն և յանձարակութիւնն եթէ ինձ ասէք՝ իմ չիք ինչ մեղուուցեալ առ Ասուրը յիշմիածինն և առ կաթողիկոսն նորա, և եթէ ունիմ ինչ չարութիւն և ապարաւան գործ, և թէ հասուցի երեսք փոխարէն վրէժինդրութիւն ըստ ամենայն արարից նոցին, բարձէ՞ք արդ զպատրուակ միջոցին և առացէք յայնապէս։ տո՞ւք զամօթս իմ երեսս իմ և վկայեցէ՞ք վասն առ

պիրատութեանս, յորմէ ամաչեցայց։ Ապա  
թէ ոչ՝ զի՞ հարկանէք զիս, ըստ Քըլտոսով  
թախանձանացն, զի՞ կոփահարէք զիս, ընդ-  
էր ցաւեցուցեալ կոկեցուցանէք զսիրտ  
իմ։ Թողջիք զիս գտարակուսեալս առ իս.  
զի թէ ունիցիմ սողտանք, դատեցայց ևս  
ինքնին։ և թէ պարտ իցէ ըստ հարկեցու-  
ցիչ հրամանաց ձերոց, անդ ի Սուրբ յիշ-  
միածին գնացեալ խոստովանել պարտիմ,  
զի արդ յինէն կանխաճառեցաւ՝ թէ Սուրբ  
յերուսաղէմի կաթողիկոսն ոչ կարէ իշխել  
զուռոր առւնն առանց հնագանդութեան  
Սուրբ յիշմիածինի կաթողիկոսին, և յիշ-  
միածինի կաթողիկոսն ոչ կարէ իշխել Տանն  
Յունաց առանց հնագանդութեան Սուրբ  
յերուսաղէմի կաթողիկոսին։ Որովհետեւ  
այսպէս է, զուք ի բաց կոցեալ անմասն  
լերուք յայսմ յամենայնէ, և միայն զսիրոյ  
եւ զմտերմութեան, զհնագանդութեան եւ  
զհպատակութեան զհետերթալով՝ զծերունի  
և զհինաւուրց զհայրդ մեր պատուեաջի՞ք,  
մեծարեսջի՞ք, զի գոնեա զօրհնութիւն և  
զալօթս գորին ամփոփեսջիք ի սիրոս և  
յոգիս և յանձինս ձեր, որով զօրացեալ և  
անցեալ ամենածալկ զարգացմամբ վերա-  
թեսջիք փառաց ի փառս, և զօրութեանց  
ի զօրութիւնս, ամէն։ [Խճ՛ֆԵ = 1666].

Հրատարակեց՝ Մ. Ե. Ն.

## Ս. ՅԱԿԱԲԻ ՆԵՐՍԻՆ

Գ Օ Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

Սեպ. 17-ին Պրինկրմ Պալատին վրայ կատարուած  
օպային ուբակմուրեան առքի, Ամեն. Ա. Պատրիարք  
Հօր նեռազիր, եւ պատախանը.

Առ Վահեմ. Արքունի Սենեկապես

Պրինկրմ Պալատ, Լոմբան

Հանեցէք ներկայացմել նոցին Վեհափա-  
ռուրեանց, մեր եւ Մերոց Յակոբեանց Միա-  
բանուրեան եւ Պալեստինի Հայ ժողովուրդի  
սրազին խնդակցութիւնները եւ զանաբա-  
նական մալրանեները։ Թող Ամենակառող  
պատապնէ եւ փրկէ ամեն վանզներէ, եւ  
օրինէ անոնց կեանիք փառապանձ խաղա-  
ղուրեամբ։

ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍՈՂԵՄԻ

ՊԱՐԵՍԻՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԱԿԱԴ ՔԱՐՏՈՒՆԱՐԻ ՊԱՏԾՈՒԱՏՈՒ

ԵՐԱՎԱՐԺԻ

Յ ԳԵՂԱՋՄԵՐ 1940

Զերդ Ամենապատուութիւն

Ակնարկելով Զեր 17 Սեպտեմբեր 1940  
րուակիր նեռազրին, զոր ուղած եիմ Վահեմ.  
Արքունի Սենեկապեսին, Պրինկրմ Պալատ,  
Վեհափառ Թագաւորի եւ Թագուհեւոյն վրայ  
գործուած ոմբակութեան առքի, այսու  
կը տեղեկացնեմ Զեր Ամենապատուութեան քե-  
նորին Վահեմ. Բարձր Պալմակեր պատօն ունի  
ներկայացնելու Զեր Ամենապատուութեան,  
նորին Վեհափառութեան անկեղծ ընորհա-  
կալուրիւնները Զեր պատգամին նամար։

Մեամ Զեր Ամենապատուութեան

խոնարին ծառայ

Ճ. Ա. ՄԱՔՅԵՐՄՈՒՆ

Աւագ Քարտուղար

Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք Ե Կ Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

\* 9 Նոյեմ. Շբ. — Նախատօնակ Գիւտ Խաչի,  
կէսօրէ վերջ, Միաբանութիւնն ամբողջ, զինա-  
ւորութեամբ Ամեն. Ա. Պատրիարքը Հօր, զնաց Ա.  
Յարութեան Տաճարը։ «Հրաշափառ» հանդիսա-  
ւոր մուտքէն յետոյ, թափօրով, Միաբանու-  
թիւնը իշաւ Հայոց սեպհական Ա. Գրիգոր Լու-  
սուսորի վերանորոգուած եկեղեցեցին, ուր կա-  
տարուցաց կիրակմտից ժամերգութիւն, և Գիւտ  
Խաչի նախատօնակ։ Նախօրօք զարդարուած էին  
եկեղեցւոյ զոյց խորանները։ և ատեանի սրբա-  
տաշ քարէ սոլայատակը ծածկուած՝ գորգով և  
կապկրաներով։

\* 10 Նոյեմ. Կիւր. — Գիւտ Խաչ, առաւտուն,  
Ա. Յարութեան Տաճարի մեր Ա. Գրիգոր Լուսուսո-  
րին եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ ժամերգու-  
թիւն, և մատուցուեցաւ Ա. Պատրաբատ Յաւարտ.  
Ա. Պատարագի, Քրիստոսի Գերեզմանին շուրջ ե-  
ալագրձ թափօր կատարուեցաւ մեծահանգէն շու-  
բով և երգեցութեամբ. Ամեն. Ա. Պատրիարքը  
Հայրը, կենաց Փայտը ի ձերին ամպուտիի ներ-  
քի կը նախազահէր հանդիսութեանց։ — Ա. Պա-  
տարագի ընթացքին, համաձայն նորին Վեհ. Մե-  
ծին Բրիտանիոյ ծորճ Զ. Թագաւոր-կայսեր բազ-  
ձաննքին, ազօթք եղաւ բոլոր այն հոգիներուն  
համար, որոնք ինկան այս վերջին տարիներուն  
հակատամբաններուն ընթացքին։ և նոյեմբեր 11-ը  
փոխանակ իրեր Զինազարարի օր տօնելու, յար-  
մար Ակատուած էր յիշատակի օր համարել, պա-  
տերազմի այս տաղիներուն գննէ։

Ինչպէս այսօր, նոյնպէս նաև երէկ, պաշտա-  
մունքներուն ներկայ եր խուռն բազմութիւն մը  
հաւատացեալներու, մեղմացած ըլլալուն համար  
կառավարութեան կողմէ զրուած արգելքը, ժո-  
ղովրդեան մուտքին համար Ա. Յարութեան Տա-  
ճարէն ներս։

\* 17 նոյեմ. Կիր. — Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ. քարոզեց Գիր. Տ. Կիւրեղյան. Պրոպ., բնաբան առնելով շնորհի է Աստուած, եւ երկրպագուաց նորա հոգութ եւ ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել» խօսքը և երկայացուց պաշտամունքը իբրև տիեզերական երկոյթ, և սակայն, ըստ, ամենէն պարզ է ուղիղ բացատրութիւնը այդ իրողութեան, Յիսուսի վերոյիշեալ խօսքն էր: Այս ցոյց տուածէ պաշտամունքին առարկան Աստուած է միայն, զոր պէտք չէ կապել ու է տեղի և ժամանակի: Այս պարտինք պաշտել, որովհետեւ կրօնը բնածին զգացում մըն է մարդուն հոգիին մէջ, և իբրև Արարի: Իր իրաւունքն է պահանջել մեղմէ այդ պաշտանքը:

\* 22 նոյեմ. Ուր. — Նախատօնակ Հրեշտակապետաց. Միաբանութիւնը Ամեն. Ս. Պատրիարք Հօր զիխաւորութեամբ, իջաւ Ս. Հրեշտակապետաց վանուց եկեղեցին, ուր կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւնը, և ապա՝ Արք Հեծակապետաց Գարդիէլի եւ Միխայէլի նախատօնակը:

\* 23 նոյեմ. Եր. — Տօն Հրեշտակապետաց. Ս. Պատարագ՝ ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին. քարոզեց Տ. Նորայր Պրոպ., բնաբան առնելով «Զգոյլ Երբուք՝ մի՛ արհամարհիցէք զմի ի փաքրկանցս յայտանէ խօսքը. ըստ Հրեշտակաները Աստուծոյ սպասաւորներն են, մարդոց այնքան մօտիկ զրկուած, պահպանելու համար զանոնք: Եւ մարդոց այնքան բարձր արձէք ունի Աստուծոյ աշքին, որ հրեշտականեր նշանակած է անոր իբր պահպան: Աստուծոյ օրինակով, մենք ալ պարաւոր ենք օգնել իրարու, կարեւ որութիւն տալով նոյնիսկ մանուկներուն, որոնց մէջ արձէք մը կայ: — Ս. Պատարագէն յետոյ, Միաբանութիւնը հիւսասիրուցացաւ Ս. Հրեշտակապետաց վանաց Տեօչարանին մէջ:

\* 24 նոյեմ. Կիր. — Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Գլխազդի մատրան մէջ: Քարոզեց Տ. Գէորգ Պրոպ., «Երանի ոյք պահն զիքաւունս, և առնեն զարդարութիւն յամնայն ժամ» բնաբանին վրայ: Անդրադառնալով աշխարհի ներկայ անսույց և յեղաշրջուած կացութեան, քրիստոնեաներուն պարտականութիւնն է, ըստ, Ալլալ զգաստ եւ արթուն, սուրբ եւ պարկեշտ, տանիիլի զարձնելու համար տաղնապալից այս օրերը: Յարդորեց հաւատքով աղօթել աշխարհի խաղաղութեան համար:

## ԲԱՐԵԳԱՇԽԱԿԱՆ ՆՈՒԷՐԱՆԵՐ

Նորինակարութեամբ եւ օրինութեամբ կ'արձամագրեմ 1940 աւաւոյ թբացին եղած նետեւեալ բարեպատական նուէրաները.

1. Երուսաղէմարնակ Տիկին Մարիամ Քէօշէկերեան՝ սպիտակ կտաւէ ինքնածեռագործ սեղանի ծածկոց մը:

2. Այնթապացի Տիկար Պետրոս Կիրակոսան, Փոքր գորդ մը:

3. Երուսաղէմարնակ Տիկին Մարի Քիւնիւքան, մէկ ձեռք պատարագի քահանայական ըղբառ, իր ձեռքով կարուած:

4. Աղեքսանդրաբնակ Այրի Տիկին Մարի Մատուրեան՝ երկու արծաթ կանթեղ, մին Ս. Աստուածածնի գերեզմանին համար, միւսը Առաքելական Աթոռին: Վեց մասերէ բաղկացեալ ներքին վարագոյներ Ս. Աստուածածնի գերեզմանին համար, ու սեղանի եւ գրակալի ծածկոցներ: Ս. Յարութեան Տաճարի Ս. Լուսաւորչի եկեղեցիին համար երկու սանդղանք աղաքանակ սանդղանի ծածկոցներ: Յ. Յարութեան Տաճարի Ս. Լուսաւորչի եկեղեցիին համար երկու սանդղանք աղաքանակ սանդղանի ծածկոցներ: Յ. Յարութեան Տաճարի Ս. Լուսաւորչի եկեղեցիին համար մէկ պղնձեայ ջրօրհնեաց կաթոայ, եւ Ս. Յակոբայ Տաճարին համար բուրժառներու երկաթեայ պահարան մը:

5. Երուսաղէմարնակ Պրուսացի Տիկին Աննիկ Եսայանեան՝ Ս. Գլխազդին սպիտակ կտաւէ սեղանի ծածկոց մը:

6. Երուսաղէմարնակ Տիկին Ավաննա Զաքարեան՝ Ս. Գլխազդի սեղանին ինքնածեռագործ գանթէէ կորփուրայ մը:

7. Աղեքսանդրաբնակ Օր. Արուսեան Թահամպեան՝ Ս. Յակոբայ Տաճարին՝ սնդուսի վրայ ասեղնագործուած ինքնածեռագործ կորփուրայ մը:

8. Հալէպարնակ Այնթապացի Օր. Տիկին Պայտղեան՝ Արրոց Յակոբեանց Տաճարին՝ ինքնածեռագործ կորփուրայ մը:

9. Գայիշէկաբնակ Տիկին Հայկուհի Պօյանեան՝ Արրոց Յակոբեանց Տաճարին՝ աւետարանի արծաթեայ երես մը և խաչ մը:

10. Հալէպարնակ Տիգրանակերտացի Տիկին Մարիամ ծիլմէճնեան՝ Ս. Գլխազդին՝ մէկ ոսկի պապանչան:

11. Քէյրութաբնակ Պալքէսիրցի Տիկին Հըպիփումէ Քէշէկեան՝ Արրոց Յակոբեանց Տաճարին՝ սնդուսէ ծածկոց մը:

12. Երուսաղէմացի Պր. Դրիգոր Յակոբ Մնացականեան՝ Ս. Գլխազդին մէկ արծաթեայ թէլքիարի կանթեղ:

13. Երուսաղէմարնակ Տիգրանակերտացի Այրի Տիկին Աննա Զարգավթնեան՝ Արրոց Յակոբեանց Տաճարին՝ մէկ կապոյտ մետաքսեայ վարագոյր:

14. Աստարազարցի Օր. Փարիս Ռէնանեան՝ Ս. Յարութեան Տաճարի Ս. Լուսաւորչի եկեղեցիին համար մէկ կարմիր թաւշեայ սանդղագործուած ինքնածեռագործ սեղանի ծածկոցներ: Ա. Հորութեան Տաճարի Ս. Լուսաւորչի Երանեան՝ Ս. Յակոբ Կարմիր կտաւէ ընկերով միասին, և չորս փունչ ինքնածեռագործ մետաքսեայ ծաղկիներ:

15. Երուսաղէմարնակ Կարնեցի Տիկին Արմենուհի Պալյանեան՝ Արրոց Յակոբեանց Տաճարին՝ մէկ ճերմակ սեղանի ծածկոց:

16. Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարապետ և Ընծայաբնակի ուսուուցիչ Տիկար Շահնան Գէրպէկերեան՝ մէկ արծաթեայ կանթեղ Ռէմէլէի Սուրբ Գէորգ եկեղեցիին համար:

17. Երուսաղէմարնակ Մարտացի Տիկար Սարգիս Գէւէնիսիւնի մէկ արծաթ կանթեղ Ռէմէլէի Ս. Գէորգ եկեղեցիին համար:

18. Խարթումանարնակ Տիկին Հայկուհի Գապատայեան՝ Արրոց Յակոբեանց Տաճարին՝ ինքնածեռագործ մէկ սպիտակ կտաւէ սանդղագործուած սեղանի ծածկոց:

19. Խարթումանարնակ Տիկին Աննէլ Գալիֆագեան՝ ինքնածեռագործ սպիտակ կտաւէ կորփուրայ մը:

Լուսաւարապետ

Կիրիէլ Ծ. ՎՐԴ. ԽՄՐԱՑԷԼԵԱՆ